ՀՅԴ Պատմական

ԴՐՈՇԱԿ



Հուլիս N07 (1634)

2011

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմական

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պաշտօնաթերթ

«Դրօշակ»
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**

Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի

Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Ձկայ դաշնակցականութիւն առանց Դաշնակցութեան 2

Սոցիալ-տնտեսական

Սոցիալական նշանակության բնակարանային

աղահովումը Գերմանիայում 5

Պատմաբանական

1921թ. փետրվարյան ապստամբության շրջանում

Հայիեղկոմի և ՀՓԿ գործադրած տեռորի հարցի շուրջ 12

Տարածաշրջան

Իրանի ռազմաարդյունաբերական համալիրը

Այսօր կամ երբեք 18

Մեր նվիրյալները

Մերուժան Մօսիեան 24

Դաշնակցական բեմ

Քիչ ասուած եւ դեռ չասուած բաներ

Դանիէլ Վարուժանի մասին 32

Գրական հարցեր

Գրականության հերոսը մարդն է 38

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Ճգնաժամ 43

Նոր գրքեր

Արդի լիբանանեան բանաստեղծութիւն

Մայրիներուն ծիածանը 46

Պատկերասրահ

Մկրտիչ Գիզգիզյան 48

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

Digitzed by ARF PR Office

Չկայ դաշնակցականութիւն առանց Դաշնակցութեան

ՀՅԴ 31-րդ ընդհանուր ժողովից յետոյ եւ ՀՀ համապետական երկու կարեւոր ընտրութիւնների նախընտրական ժամանակահատուածում, առիթ կայ, ահա, անդրադառնալու իշխանական կօալիցիայի գլխաւոր ուժի՝ ՀՀԿ-ի պատկերացումներին՝ ՀՅԴ-ների ու անելիքի մասին, եւ թափանցելու այդ պատկերացումների ու ակնկալիքների գաղափարախօսական խորքերը: Ի վերջոյ ՀՅ Դաշնակցութեան նկատմամբ ՀՀԿ-ի գաղափարախօսական դիրքորոշումներից եւ ՀՅԴ-ների եւ անելիքների մասին հանրապետական ղեկավարների պատկերացումներից են կախուած սոյն կուսակցութեան քաղաքական մօտեցումները, նրանց՝ ինչպէս հակադաշնակցական, այնպէս էլ դաշնակցականամէտ կեցուածքների դրդապատճառները: ՀՀԿ-ի գաղափարախօսական դիրքորոշումների մի կարեւոր մասը, վերջին տարիներին, դրսեւորուել է ՀՀԿ փոխնախագահ Մ. Լալայեանի հեղինակած «Ազգային գաղափարախօսութեան խնդիրների շուրջ» աշխատութեան մէջ, որը հրատարակուել է 2003 թ., ապա վերահրատարակուել երկու անգամ՝ չնչին փոփոխութիւններով:

Հեղինակի կարծիքով՝ «Դաշնակցութիւնն ունի հմայք, առասպել եւ առաքելութիւն, բաներ, որոնք յատուկ են թերեւս միայն Հայ Եկեղեցուն, եւ որոնց բացակայութեան դէպքում այն դառնում է շարքային կազմակերպութիւն»: Այս հրաշալի բնորոշումը անթերի կը լինէր, եթէ հմայք, առասպել եւ առաքելութիւն հասկացութիւնների ընդհանուր քողի տակ չթերարժեւորուէր ՀՅԴ գաղափարախօսութեան դերն ու նշանակութիւնը: «Որեւէ գաղափարական դաշնակցական կը հաստատի,- հաւատացնում են հանրապետականները,- որ Դաշնակցութեան ուժն ու հմայքը իր Ծրագրի, Կանոնագրի կամ կազմակերպական կառոյցի մէջ չէ, այլ՝ որոշակի աւանդոյթներից ձեւաւորուած բարոյականի, որը յայտնի է դաշնակցականութիւն անուամբ: Իսկ դաշնակցականութիւն ասել է՝ ա) նուիրումի եւ նահատակութեան ոգի, բ) յեղափոխականութիւն, գ) մարտական եւ կազմակերպական կարգապահութիւն, միաժամանակ»: Դեռ թողնենք մէջբերուած մտքի հանելուկային հակասութիւնը, որով մի կողմից ՀՅԴ Կանոնագիրը չի համարում Դաշնակցութեան ուժի ու հմայքի աղբիւր, իսկ միւս կողմից՝ դաշնակցականութիւնը բացատրում է մարտական եւ կազմակերպական կարգապահութեամբ: Բա էլ որտեղից է բխում տուեալ կարգապահութիւնը, եթէ ոչ հէնց ՀՅԴ Կանոնագրից ու կազմակերպական կառոյցից:

Անցնենք: Մեր կարծիքով՝ ՀՅԴ ծրագրային հասկացութիւնները եւ կանոնագրային սկզբունքները, ահաւասիկ, հէնց այն արժէքներն են, որոնց այսօր չի ախորժում Հայաստանի քաղաքական էլիտան: Այս իրողութիւնը, կարմիր թելի պէս, ակնյայտօրէն երեւում է ՀՀԿ-ի գաղափարախօսական դիրքորոշումներում, իսկ վերոյիշեալ գրքոյկում՝ կրկնւում մի քանի անգամ:

ՀՀԿ-ական մտաւորականը կարծում է, թէ Դաշնակցութիւնը կարիք ունի «ինքնանորոգման» մի գործընթացի: Ըստ նրա՝ անհրաժեշտ է «ՀՅԴ գաղափարաբանութեան ազգայնականացում, այսինքն՝ ազգային եւ ընկերվարական դրոյթների հաշուեկշռի փոփոխում՝ ի նպաստ առաջինի»: ՀՅԴ-ի ազգային եւ սոցիալիստական արժէքները ժողովրդավարութեան եւ յեղափոխա-

կանութեան հետ համատեղ կազմում են աշխարհընկալման ամբողջական մի համակարգ: Համակարգ, որն ուղղուած է Հայաստանի եւ Հայութեան լիակատար ազատագրմանը եւ լիարժէք զարգացմանը: Արժէքների այդ քառեակը համարկուած, համակարգուած է եւ ոչ թէ դասակարգուած: Եթէ ՀՀԿ-ին դուր է գալիս միայն ազգայինը, խնդրեմ, թող իրենց արժէքային համակարգից դուրս նետեն «ազատականութիւն», «պահպանողականութիւն» հասկացութիւնները, որոնք, ի դէպ, չափազանց ապաշնորհ կերպով են կուտակուել նրանց ծրագրային փաստաթղթերում:

Դաշնակցութեան միմիայն «ազգային» առաքելութեան համատեքստում, ՀՀԿ-ականները երազում են Դաշնակցութեան համար տեսնել սահմանափակ եւ կանխորոշուած դեր. «Դաշնակցութեան հիմնական առաքելութիւնը,- ըստ նրանց,- մնում է Սփիւռքի հայօրէն պահպանումը եւ նրա Դարձը Արեւմտահայաստան: Այս առաքելութեան կայացումն անցնում է Հայկական պետութեան ինքնիշխանացման, Ջաւախքի եւ Նախիջեւանի ազատագրման ճանապարհով»: Թէեւ այս բանաձեւումներում խօսք չկայ Արեւմտեան Հայաստանի ազատագրման մասին, այնուամենայնիւ, ենթադրում ենք, որ նշուած մտքերի հեղինակները լաւ են հասկանում, որ առանց Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան, էապէս, անիմաստ է դառնում Սփիւռքի «Դարձը Արեւմտահայաստան»: Սակայն այստեղ կայ Հայութեանը որպէս քաղաքական առանձին-առանձին ձգտումներ ունեցող եւ օրգանապէս տարանջատ մի կոնգլոմերատ տեսնելու վտանգաւոր ընկալումը, որն ամուր ընկած է ինչպէս ՀՀԾ-ական, այնպէս էլ ՀՀԿ-ական գաղափարախօսութեան հիմքում: Այս առումով՝ հայը հայից, Հայաստանը՝ Հայաստանից տարբերակելու, քաղաքական ճղճիմ հաշիւներով Դաշնակցութեան համար «հիմնական առաքելութիւն» յօրինելու փորձերը արդէն 20-ամեայ վաղեմութիւն ունեն:

Իսկ այս «հիմնական առաքելութիւն»-ից զատ, ուրիշ ինչ «ոչ հիմնական» դեր են նախատեսում ՀՅԴ-ի համար. «Հայկական պետութեան ներսում Դաշնակցութիւնը պէտք է գործի առաւելապէս իբրեւ բարոյական ուժ. նա պէտք չէ հրապուրուի գործադիր իշխանութեան լծակներով՝ ա) այսօրուայ անխուսափելի մրոտումից զերծ մնալու, որով՝ իր հմայքն ու առասպելը պահելու, բ) դրսի ճնշումներից պետութեանն, ըստ հնարաւորի, ապահովագրելու, գ) պետութեան հետ համագործակցութիւնը քողարկելու համար»: Սա արդէն քաղաքական դերերի բնորոշման եւ բաշխման եւս մեծամտական փորձ է: Գործադիր իշխանութիւններից հեռու պահելով ՀՅԴ-ին, հանրապետականները նախ իբր «խաթր» են անում Դաշնակցութեանը չմրոտուելու պահով, ապա ապահովագրում են պետութեանը դրսի ճնշումներից: Ասել է՝ եթէ Հայաստանում հմայք ու առասպել ունեցող քաղաքական ուժը յայտնուի գործադիր իշխանութեան մէջ, ապա Հայաստանը ճնշումների կենթարկուի դրսից: Սա օրինաչափութի՞ւն է, թէ՞ իրաղրային քաղաքականութեան այսօրեայ թելադրանք: Պարոնայք, իսկ սխալմամբ չէ՞ք մտածում նաեւ, թէ հմայք, առասպել եւ առաքելութիւն ունեցող 120ամեայ կուսակցութիւնը չի գիտակցում միջազգային քաղաքականութեան իրաղրութիւնները: Թէ՞ կարծում էք, որ ՀՅԴ-ն երբեւէ Հայաստանն ու Հայութեանը կը վտանգի իր քաղաքական ձգտումների բերումով: Եթէ դուք լաւ գիտէք ՀՅԴ պատմութիւնը, ապա մնում է ենթադրել, որ այս օրինաչափութիւնը ընդամենը ձեր մոգոնած խաղն է, որով ձգտել ու ձգտում էք ՀՅԴ-ին հեռու պահել գործադիր իշխանութիւնից, ինչը, պէտք է ենթադրել, ՀՀԿ-ի մենաշնորհն է այլեւս:

Եթէ առաջնորդուենք ՀՀԿ-ական նշուած օրինաչափութեամբ, էլ ինչո՞ւ են ցանկանում ՀՅԴ-ին տեսնել օրէնսդիր իշխանութեան մէջ, ինչո՞ւ են ասում, թէ ՀՅԴ-ն «պէտք է ունենայ տեղեր խորհրդարանում՝ ընտրուած համամասնական կարգով, որոնց միջոցով զգալ տայ իր ներկայութեան մասին Երկրում»: Եթէ յանկարծ ՀՅԴ-ի նախաձեռնութեամբ խորհրդարանում ընդունուի թոշակային, հարկային կամ ընտրական ոլորտներին առընչուող որեւէ բարեփոխում, բա յետոյ ի՞նչ էք անելու: Կամ՝ եթէ յանկարծ ՀՅԴ-ի նախաձեռնութեամբ խորհրդարանում անցնի Վիլսոնի իրաւարար վճռի հիման վրայ պահանջատիրական որեւէ նախագիծ, դրսի ուժերը չե՞ն ճնշի պետութեանը: Իսկ եթէ այսպէս է, յատկապէս ինչո՞ւ էք ցանկանում, որ «Ջաւախքի ու Նախիջեւանի ազատագրման հարցերում ՀՅԴ-ն լինի հիմնական մունետիկն ու գործադրողը»: Ջաւախքի ու Նախիջեւանի եւ դեռ Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան գործով զբաղուող ՀՅԴ-ն, մօտ տասը տարի, մասնակցել է գործադիր իշխանութեանը եւ հէնց հիմա էլ իր ներկայութիւնը զգացնել է տալիս ԱԺ-ում: Դրանից Հայաս-

տանը արդեօք ճնշումների՞ է ենթարկուել: Եթէ մոռանում էք արտաքին ուժերի կողմից Հայաստանի նկատմամբ գործադրուող ճնշումների բնոյթն ու պատճառները, ապա յիշեցնենք ձեզ, պարոնայք, որ Հայաստանին ոչ միայն ճնշում են, այլեւ նրա անկախութիւնն են հարցականի տակ առնում այսօր ձեր վարած որոշ արտաքին, ներքին եւ սոցիալ-տնտեսական սխալ քաղաքականութիւնների պատճառով:

Ուրիշ էլ ինչպիսի՞ն են ՀՀԿ-ականները երազում տեսնել ՀՅ Դաշնակցութեանը: Այսպէս՝ «կուսակցութեան պատմութեան էջերը թերթելով, մենք այս հարիւրամեակում կուզէինք տեսնել ո՛չ թէ երիտթուրքերից խաբուած կամ եւրասոցիալիզմ տենչող, այլ՝ իր ներսում Յեղակրօն, Տարօնական շարժումներ ծնելու (նաեւ պահպանելու) ընդունակ Դաշնակցութիւն»: Որքա՜ն պատմագաղափարախօսական անճշտութիւններ կան ձեր պատկերացումներում... Նախ՝ երիտթուրքերից խաբուել-չխաբուելու, համագործակցել-չհամագործակցելու յանգերգը ՀՀԿ-ից լսելն այլեւս չի զարմացնում, որովհետեւ Հայաստանի քաղաքական դաշտում մի փոքր «թրեւ գալով» անգամ, դժուար չէ հասկանալ, որ բոլշեւիզմի տապալումով հանդերձ, տակաւին չի անհետացել բոլշեւիկութիւնը: Նոյն պատմաշինական միֆերն ու թաբուները գործում են նաեւ այսօր: Եթէ անցեալում հակադաշնակցական պայքարում տիրում էր պատմագիտական անծայրածիր խաւարը, ապա այսօր լոյսն ու մութը յաճախ են իրար հետ հանդէս գալիս՝ նողկանք ու ձանձրոյթ պատճառելով... Գոնէ բոլշեւիկները «երիտթուրքերից խաբուած» Դաշնակցութեանը չէին համարում հմայք, առասպել եւ չգիտես էլի ինչ առաքելութիւն ունեցող կուսակցութիւն եւ իրենց բարոյական իրաւունք չէին վերապահում Դաշնակցութեանը տեսնել այսպիսին եւ ոչ այնպիսին. «...Ո՛չ թէ Մովսէս Տէր-Գալուստեանների ու Ջորջ Մարտիկեաններին, այլ՝ Նաթալիների ու Նժդեհների Դաշնակցութիւն»:

Իսկ այդ շարժումները, որոնց մասին ճառում էք, հիմնականում ձեւաւորուել են օրուայ քաղաքական մթնոլորտում եւ ուղղուած են եղել ՀՅԴ-վարած քաղաքականութեան դէմ: «Մարտկոցական» շարժումն, ըստ էութեան, սովետամէտ շարժում էր, իսկ «Տարօնական»-ը՝ պրոնացիստական: Այդ շարժումները, բոլորն էլ, մարել են իրենց ծնունդ տուող գործիչների քաղաքական կարիերայի աւարտով: «Մարտկոցական»-ը, վերանուանուելով «ամրոցական», ի վերջոյ մարեց 1960-ականներին, իսկ «Տարօնական»-ը անհետացաւ նացիզմի փլուզումով: Այդ շարքին չի կարելի դասել ցեղակրօն ուխտերը, որոնք, ոչ թէ առանձին շարժման մաս են եղել, այլեւ եղել են ՀՅԴ երիտասարդական կառոյցի միաւորներ եւ վերանուանուելով «Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն»՝ գոյատեւում են առ այսօր: «Մարտկոցական» եւ «Տարօնական» շարժումներում ընդգրկուած բազմաթիւ դաշնակցականներ հետագային զղջացել եւ ձգտել են վերականգնել իրենց կուսակցական անդամակցութիւնը: Այս իմաստով արժէ այստեղ յիշատակել անուանի գրող, հրապարակախօս Վազգէն Շուշանեանի («Մարտկոցական»-ից) եւ Բաշ-Ապարանի ճակատամարտի հերոս Սեդրակ Ջելալեանի («Տարօնական»-ից) անունները: Դուք շատ լաւ գիտէք «Մարտկոցական» եւ «Տարօնական» շարժումների գլխին կանգնած գործիչների՝ Շ. Նաթալիի եւ Գ. Նժդեհի միմեանց նկատմամբ խիստ անհանդուրժողական, իրարամերժ եւ գաղափարախօսական առումով թշնամական, ոխակալ վերաբերմունքը: Խնդրեմ ասացէք, ինչպէ՞ս էք պատկերացնում «Նաթալիների ու Նժդեհների Դաշնակցութիւն»-ը:

Ձեր արշիններով մի չափէք ՀՅԴ-ին: Դաշնակցութիւնը, ըստ էութեան, նման չէ ձեր կուսակցութեանը: Դաշնակցութիւնը չի եղել ու չի լինի ձեր նշած կամ չնշած ցանկալի կամ ոչ ցանկալի մարդկանցից եւ ոչ մէկի մասնաւոր սեփականութիւնը:

Մենք լաւ ենք ըմբռնում ՀՀԿ-ի պատկերացումների գաղափարախօսական խորքը: Նա չի ցանկանում տեսնել այն Դաշնակցութիւնը, որն ազգայինից բացի, ունի նաեւ քաղաքական եւ սոցիալական հայեացքներ եւ այս երկրի համար տենչում է քաղաքական ազատութիւն եւ սոցիալական արդարութիւն:

Չկայ դաշնակցականութիւն առանց Դաշնակցութեան, ճիշտ այնպէս, ինչպէս Հայաստանը չի կարող լինել առանց հայի:

Ժամն է արդէն, պարոնայք, որ Հայաստանում այլոց տեղն ու անելիքը սահմանելու փոխարէն, մի փոքր էլ խորհէք ձեր սեփական կուսակցութեան տեղի ու անելիքի մասին:

Սոցիալական նշանակության բնակարանային ապահովումը Գերմանիայում

Հայկ Հովհաննիսյան
Տնտեսագիտության թեկնածու

Ժամանակակից աշխարհում Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը շարունակում է մնալ աշխարհի ամենամեծ և տեխնոլոգիապես ամենազարգացած երկրներից մեկը, որի բնակչությունը կազմում է 81.471.834 բնակիչ, ուրբանիզացման մակարդակը՝ ամբողջ բնակչության 74 տոկոսը[1]: Լինելով տնտեսապես հզոր երկիր[2], Գերմանիայի քաղաքական վեկտորի հիմքում մշտապես եղել է երկրի քաղաքացու սոցիալական պաշտպանությունը, այս ոլորտում խնդիրների շարունակական լուծումը: Գերմանիայի սոցիալական պաշտպանության ներկայիս «կորպորատիվ», «պահպանողական» կամ «բիսմարկյան» մոդելը շարունակում է եվրոպական երկրների շրջանում համարվել համեմատաբար արդյունավետը, որ ձևավորվել է 20-րդ դարի 50-60-ական թվականների քաղաքական փոփոխությունների արդյունքում: Այս մոդելի ստեղծման հիմքում Երկրորդ համաշխարհային պատերազմից տուժած Գերմանիայի վերականգնումն էր, որի քաղաքական իրագործումը կապվում է Լ. Էրխարդի և Ա. Մյուլլեր-Արմակի անունների հետ: Մոդելի կիրառմամբ Մյուլլեր-Արմակը շրջանառության մեջ մտցրեց «սոցիալական շուկայական տնտեսություն» հասկացությունը: Էրխարդը, որը Գերմանիայի էկոնոմիկայի նախարարն էր, ապա նաև կանցլերը, պնդում էր, որ պետությունը պետք է սոցիալական աջակցություն ցուցաբերի հասարակության առավել թույլ և քիչ ապահովված խավերին՝ միաժամանակ խթանելով տնտեսական մրցակցությունը: Կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ պետությունը ստանձնեց երկրի ազգային եկամտի բաշխումը, իսկ եկամուտների վերաբաշխման գործընթացն սկսեց իրականացնել ավելի շատ ուղղորդելով ոչ թե ուղղահայաց (հասարակության դիֆերենցման մակարդակի նվազեցման), այլ հորիզոնական մակարդակով (միջին դասի ներսում):

1. Աղբյուրը՝ Index Mundi, http://www.indexmundi.com/germany/demographics_profile.html
2. Գերմանիայի ՀՆԱ-ն կազմում է համաշխարհային ՀՆԱ-ի 3,9 տոկոսը, իսկ ԵՄ երկրների ՀՆԱ-ի գրեթե 30 տոկոսը: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմում է 35.000 դոլար: Պետական ծախսերը կազմում են ՀՆԱ-ի գրեթե 50 տոկոսը: Իսկ ՀՆԱ-ի մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ծառայությունները՝ 60 տոկոս, արդյունաբերությունը՝ 38 տոկոս, գյուղատնտեսությունը՝ 2 տոկոս: Աղբյուրը՝ http://ru.wikipedia.org

Էսպինգ Անդերսենը հետազոտելով բարեկեցության հասարակարգերի երեք հիմնական՝ ազատական, կորպորատիվ, սոցիալ- ժողովրդագրական մոդելները[3], Գերմանիայի բարեկեցության համակարգը բնորոշել է որպես կորպորատիվ կառուցվածք ունեցող համակարգ, որը զարգացել է կաթոլիկ եկեղեցու և ուժեղ պահպանողական երկրի ազդեցության ներքո[4], գոյություն ունեցող փոխադարձ օգնության միությունների հիմքի վրա և մի կարևոր՝ «սուբսիդավորման» սկզբունքի հետ միասին (երկրների բարեկեցության մոդելների համեմատականը ներկայացվում է աղյուսակ 1-ում): Այս մոդելի առավելություններից է սոցիալական նշանակության աջակցության բարձր մակարդակը, որը նույնպես թույլատրվում է մասնավոր ծառայության համակարգի համար առանց չափանիշների: Բնակարանային քաղաքականության այս մոդելը նպատակ ունի աջակցել տնային տնտեսությանը որպես շուկայի դերակատար, Գերմանիայում տեղական իշխանությունները պատասխանատու են եղել սոցիալական աջակցության իրականացման համար:

Աղյուսակ 1. **Բարեկեցիկ հասարակարգերի հիմնական մոդելների առանձնահատկությունները**

Գերմանիային բնորոշ կորպորատիվ բարեկեցության համակարգը պաշտպանում է բնակչության սոցիալական կարգավիճակը և կյանքի չափանիշները, ապահովելով սոցիալական անվտանգության միջոցներով, որը վերաբերում է եկամուտներին:

Գերմանիայի սոցիալական պաշտպանության համակարգի ներդրման մեկնարկը տրվեց 20-րդ դարի կեսերին: Այդ ժամանակամիջոցում երկրի համար մեկ հիմնախնդիր ընդունվեց բնակարանային ապահովումը և այդ ուղղությամբ լուծման համակարգային մոտեցման կիրառումը: Այսօր արդեն Գերմանիայի սոցիալական ապահովման հիմնական բնութագրիչներ են համարվում պրոֆեսիոնալ միասնականությունը, վերաբաշխման, բարեկեցության և ապահովագրական կազմակերպությունների ինքնակառավարման սկզբունքները:

Սոցիալական կամ հանրային բնակարանային ապահովումը մարդկանց բնակարաններով ապահովումն է, որի դեպքում բնակարանի սեփականության իրավունքը պատկանում է պետությանը կամ տեղական ինքնակառավարման մարմիններին: Համաշխարհային պրակտիկայում այդ հասկացությունը ընդգրկում է անշարժ գույքի

	Ազատական	Կորպորատիվ	Սոցիալ-ժողովրդագրական
1.Գործիքներ	Փորձարկված աջակցության միջոցներ	Պետության կողմից աջակցվող մասնավոր ապահովագրություն	Պետությունը առաջնային օժանդակող օղակն է
2.Նպատակներ	Հզորացած շուկա	Քաղաքացիական հասարակության ուժեղացում, սահմանափակ շուկա	Բարեկեցության և աշխատանքի համակցում, լրիվ զբաղվածություն
3.Երկրներ	ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Մեծ Բրիտանիա	Ավստրիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա	Սկանդինավյան երկրներ

3. Աղբյուրը՝ Esping-Andersen, 1990.
4. Կաթոլիկ բնակչությունը Գերմանիայի ամբողջ բնակչության ամենամեծ տեսակարար կշիռն է կազմում՝ 32,4 տոկոս:

վարձակալության բազմաթիվ ձևեր, սեփականատերեր կամ կառավարիչներ, որոնք հանդիսանում են կազմակերպություններ (պետական և տեղական հաստատություններ, շահույթ չհետապնդող կազմակերպություններ, այլ կազմակերպություններ)՝ նպատակ ունենալով հասարակության բոլոր շերտերին ապահովել բնակարաններով: Սոցիալական բնակարանային ապահովման քաղաքականության հիմքում բարեկեցիկ հասարակարգի կառուցումն է, որը հաշվի է առնում համընդհանուր բարեկեցության հասնելուն ուղղված սոցիալական ապահովման քաղաքականության նպատակներն ու գործիքները, ինչպես նաև շուկայի և պետության դերը: Սակայն բնակարանային ապահովումը ոչ միայն սոցիալական, այլ նաև տնտեսական խնդիր է: Սա գործոն է, որի օգտագործումը կարող է լուրջ խթան հանդիսանալ երկրի տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար, միաժամանակ թույլ տալով լուծել բազմաթիվ խնդիրներ՝ ժողովրդագրական, քաղաքաշինական, բնապահպանական, տարածքների համաչափ զարգացման և այլն:

Սոցիալական բնակարանային ապահովման ոլորտում եվրոպական երկրների փորձառությունը, համեմատվող ցուցանիշները, հաշվարկման մեթոդները տարբեր են: Եթե Արևելյան Եվրոպայի, հատկապես նախկին խորհրդային ճամբարի եվրոպական երկրներում բնակարանի գնահատման ցուցանիշը բնակվելու տարածքն է եղել, ապա Արևմտյան Եվրոպայի երկրներում հաճախ օգտագործվել են սենյակների քանակը, բնակարանի բնակիչների թիվը: Այս առումով Գերմանիան մեծ փորձառություն ունի սոցիալական բնակարանաշինության ոլորտում, որն առաջնահերթ ուղղված է ցածր եկամուտ ունեցող անձանց: Սոցիալական նշանակության բնակարանային ապահովման ծրագրերը Գերմանիայում սկսեցին զարգանալ 1940 թ. ընդունված «Շահույթ չհետապնդող բնակարանային օրենքի» վրա: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Արևմտյան Գերմանիայի բնակարանային սեկտորի 20 տոկոսի հիմնահատակ խարխլման, իսկ 25 տոկոսի վնասման պատճառով, երբ 10 մլն.-ից ավելի գերմանացի փախստականներ էին ծվարել Արևմտյան Գերմանիայում, պետությունը առաջնային համարեց սոցիալական բնակարանաշի-

Էդիթ Անդերսեն

նությունը: Ենթադրվում էր բնակարանային ֆոնդի առնվազն 50 տոկոսի մեծացում: Եվ Գերմանիան շատ երկրների նման չգնաց ժամանակավոր բնակարանային ապահովման շենքերի կառուցման, ինչպես, օրինակ, Խորհրդային Միությունում, երբ խրուշչովյան շենքեր կառուցվեցին՝ 20-25 տարվա հեռանկարով: Այս ոլորտում Գերմանիայում ձևավորվեց համակարգ, որը գործում էր մասնավոր կապիտալի և պետական սուբսիդիաների համադրմամբ: Հետպատերազմյան ժամանակահատվածում հանրային բնակարանային ապահովումը լայն թափով սկսեց զարգանալ՝ վերականգնելով ավերված տնտեսությամբ Արևմտյան Գերմանիայի բնակարանային սեկտորը: Միայն 1945-1957 թթ. Գերմանիայում կառուցվեց 5 մլն. նոր բնակարան, 250 մլն. քառ.մ բնակտարածքով, յուրաքանչյուր ընտանիքի ապահովելով առնվազն 50 քառ.մ բնակտարածքով: Պետության աջակցության մասնաբաժինը սեկտորին կազմել է ամբողջ ներդրումների 30-ից 50 տոկոսը: Արդյունքում, վերջնական սպառողը, որը ցածր եկամուտ ունեցող բնակիչն է, իր եկամտի 10 տոկոսի չափով վարձավճարի տրամադրման դիմաց ստացել է որակյալ բնակարան: Մյուս կողմից, Գերմանիայի բազմաբնակարան շենքերը փոխվեցին փոքր հողակտորներով փոքր տների կառուցմամբ, ինչը նվազեցրեց սոցիալական լարվածությունը բնակչության շրջանում:

Ալֆրեդ Մյուլլեր-Արմակ

1950-1985 թթ. շահույթ չհետապնդող կազմակերպությունների կողմից կառուցվել է 3,7 մլն. բնակարան Գերմանիայում, որից 2,7 միլիոնը՝ վարձակալական հիմունքներով: 1960-ական թվականների վերջին, երբ տարեկան կառուցվում էր 300 հզ. բնակարան, կառավարության վարկերը փոխարինվեցին կապիտալի շուկայի փոխառություններով: 1980-ական թվականներին ավելի շատ մասնավոր ներդրումներ ներգրավվեցին սոցիալական բնակարանային ապահովման նախագծերի մեջ՝ պայմանավորված բնակարանային պահանջարկի կտրուկ աճով:

Հետագայում Գերմանիայում սոցիալական բնակարանային խնդիրներ ծագեցին 1989 թվականին: Արևելյան և Արևմտյան Գերմանիաների միացումը և բաց սահմանները Արևելյան Եվրոպայում ձևավորեցին նոր մարտահրավերներ գերմանական բնակարանային շուկայի առաջարկի համար: Բնակարանների նկատմամբ պակասուրդը միջին և ցածր եկամուտ ունեցող խմբերի համար Արևմուտքում, և բնակարանային ֆոնդի արդիականացումը՝ Արևելքում, առաջարկի խթանման հիմնական գործոններն էին: 1990-ական թվականների կեսին բնակարանային շինարարությունը և բնակարանային ֆոնդի վարձակալությունը հասավ իր բարձր մակարդակին: 1994 թ. Գերմանիայում ընդունվեց «Դաշնային բնակարանային խթանման օրենքը», որը սոցիալական նշանակության բնակարանաշինությանն ապահովում էր համապատասխան գործիքակազմով՝ աջակցելու կառուցապատմանը, նվազեցնելով բնակարանաշինության վարկավորման տոկոսադրույքները, մեղմացնելով հարկերը վարձակալական բնակարանային շինարարության համար:

Վերջին տարիների ազատական բարեկեցության, առավելապես տնտեսական խնդիրների պատճառով Գերմանիայում գնալով նվազում է սոցիալական բնակարանային ֆոնդի տեսակարար կշիռը, որը զուգորդվում է բնակարանների մասնավորեցմամբ: Վերջին 50 տարիների ընթացքում այս ֆոնդը տարեցտարի կրճատվել է 100 հզ.-ով: Եթե 1980-ական թվականներին Արևմտյան Գերմանիայում այն կազմում էր գրեթե 4 մլն., ապա 2003 թ.-ին արդեն հասնում էր 1,7 մլն.-ի: Այսպես, Արևմտյան Բեռլինում սոցիալական բնակարանների թիվը կրկնակի նվազել է և այսօր կազմում է ընդհանուր բնակարանային ֆոնդի 6 տոկոսը[5]: 2001 թ. օրենքով Գերմանիայում սոցիալական նշանակության բնակարանային ապահովման օրենսդրությունը և ծրագրերը փոխվեցին սկզբունքորեն նոր աջակցության գործողություններով: Նոր օրենսդրությամբ աջակցություն նախատեսվեց և՝ մասնավոր ներդրողներին, և՝ բնակարանային ապահովման տեղական կազմակերպություններին՝ շուկայում մատչելի բնակարաններ վարձակալելու կամ գնելու հետ կապված խնդիրներ ունեցողներին նման բնակարաններում ապրելու հնարավորություն ստեղծելու համար:

Գերմանիայում աջակցության իրականացման բոլոր ձևերը հիմնված են հետևյալ երեք սկզբունքների վրա.

- Ստորադասության սկզբունք, ըստ որի խնդիրները կարգավորվում են ամենացածր մակարդակով: Տեղական ինքնակառավարման մարմինները սոցիալական ծրագրերը պատրաստում են ինքնուրույն, իսկ դաշնային և նահանգային (մարզային) կառավարությունները միջամտում են միայն այն դեպքում, երբ տեղական ինքնակառավարման մարմինները գերծանրաբեռնված են:
- Համատեղ վճարումների սկզբունք, համաձայն որի վերջնական օգտագործողները պետք է վճարեն իրենց մասնաբաժինը՝ ի լրումն տեղական, նահանգային կամ դաշնային վճարումների:
- Տեղական առաջնայնության սկզբունք, որի

5. Աղբյուրը՝ "Социальное жилье в Германии." Автор: Виктория Грегуольдо, 23 ноября 2009, www.justreal.ru/presscenter/analytics/514/

Լյուդվիգ Էրխարդ

դեպքում ոչ մի բնակարանային միավոր չպետք է ստեղծվի որպես նահանգային կամ դաշնային սեփականություն:

Ավանդական սոցիալական բնակարանային ապահովման փոխարեն Գերմանիայում ուժի մեջ մտավ «Բնակարանային ապահովման աջակցության օրենքը», որով քաղաքական բարեփոխումները կենտրոնացված էին վեց հիմնական դրույթներում՝

1. Սոցիալական բնակարանային ապահովումը բնակչության լայն շերտերի համար արմատապես փոխվեց: Այն արդեն կենտրոնացած էր, որպես թիրախ խմբեր՝ ցածր եկամուտ ունեցող քաղաքացիների, երեխաներ ունեցող ընտանիքների և միայնակ տարեցների վրա:

2. Սուբսիդիաները ներդրվելու են գոյություն ունեցող բնակարանային ֆոնդում, քանի որ նորակառույց բնակարանները շատ ավելի թանկ են:

3. Բնակարանային սեփականության մասնավոր ձեռք բերումը խրախուսվում է: Նախկինում վարձակալված բնակարանները վաճառվում են վարձակալներին: Կառավարությունն ակնկալում է ավելի միատարր վարձակալական կառուցվածք սոցիալական բնակարանային ապահովման համալիրներում:

4. Սոցիալական բնակարանային ապահովման քաղաքականության բարեփոխումը փոխկապվում է քաղաքային զարգացման ծրագրերին: Խիտ հարևանությամբ բնակարաններին տրամադրվում են ավելի շատ սուբսիդիաներ:

5. Սուբսիդիաների օգտագործման պատասխանատվությունը փոխվում է դեպի դաշնային մարզեր ու քաղաքներ: Այս քաղաքականությունը կերաշխավորի ավելի ճկուն կենտրոնացում տեղական կարիքների վրա:

6. Բնակարանային ապահովման կազմակերպությունների և բարեկեցության կազմակերպությունների միջև համագործակցությունների մի նոր ձևի թիրախավորում: Հատկապես տարեց մարդկանց տների կառուցման ու սպասարկման ծրագրերը նոր կարգավորման նպատակներից են:

Գերմանիայում բնակարանային ապահովման կառուցվածքը ազգային է, որը պետության լիազորությամբ կառավարվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Դաշնային կառավարությունը որոշում է սոցիալական բնակարանային ապահովման լրիվ ծախսերի մակարդակը, մինչդեռ դրանց իրականացման պատասխանատվությունը ստանձնում են նահանգները և տեղական ինքնակառավարման մարմինները: Սոցիալական նշանակության բնակարանային ապահովումն իրականացվում է երեք մակարդակներով՝ դաշնային, նահանգային և տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով: Համապատասխանաբար, սոցիալական նշանակության բնակարանային ապահովումն իրականացվում է երեք ուղղություններով. առաջինն իրենից ներկայացնում է վարձակալության վճարների սուբսիդավորում, որն ունի տնային տնտեսությունների եկամտի խիստ սահմաններ և վարձակալության վճարների առավելագույն մակարդակներ: Երկրորդ ուղղությունն առկա է միայն որոշ նահագներում: Այս պայմաններում բնակարաններն ավելի բարձր որակի են, և ծրագրով բնակարան ստանալու համար պահանջներն ավելի մեղմ են: Թույլատրելի եկամուտները կարող են 60 տոկոսով ավելի բարձր լինել, քան առաջին մակարդակի դեպքում, իսկ վարձակալության վճարներն ավելի բարձր են և կարգավորվում են ավելի կարճ ժամանակահատվածի ընթացքում: Բնակարանային ապահովման այս ձևը տրամադրողները սովորաբար չեն ստանում անհատույց ամբողջական սուբսիդիա, այլ ստանում են սուբսիդավորված հիպոթեկային

վարկ: Երրորդ. բնակարանային ապահովման այս ձևը տրամադրողները ստանում են նմանատիպ սուբսիդիաներ, սակայն տնային տնտեսությունները հիմնականում այն օգտագործում են բնակարանի գնման և ոչ թե վարձակալության համար:

Ազգային մակարդակով Արևմտյան և Արևելյան Գերմանիաների սոցիալական նշանակության բնակարանային ապահովման գործունեության կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 2-ում: 2005-2007 թթ. ցուցանիշների հիման վրա Գերմանիայում հաշվարկվել են սոցիալական բնակարանային ապահովման հիմնական տնտեսական վերլուծության ցուցանիշները:

Աղյուսակ 2. **Բնակարանային ֆոնդի ցուցանիշները Արևելյան (E) և Արևմտյան (W) Գերմանիայում**[6]

Ներկայումս Գերմանիայի բնակարանային ապահովման համակարգի կառուցվածքում անհատ սեփականատերերին բաժին է ընկնում 45 տոկոսը, մասնավոր վարձակալությանը՝ 49 տոկոս, սոցիալական նշանակության բնակարանային ապահովմանը՝ 6 տոկոս: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Հունգարիայում սեփական բնակարանային ֆոնդը կազմում է ամբողջ բնակարանային ֆոնդի 92 տոկոսը, մասնավոր վարձակալության մասնաբաժինը կազմում է 4 տոկոս, իսկ սոցիալական նշանակության բնակարանային ապահովումը՝ 4 տոկոս: Իսկ սոցիալական նշանակության բնակարանների թիվը այս երկրում կազմում է 167 հզ.՝ համեմատած Գերմանիայի 1,8 մլն. բնակարանների հետ: Նիդեռլանդներում համապատասխանաբար կազմում է 54, 11 և 35 տոկոս: Սոցիալական նշանակության բնակարանների թիվը կազմում է 2,4 մլն.: 2009

Բնակիչների թիվը	82,4	Մլն. բնակիչ (2007)
Յուրաքանչյուր տնային տնտեսության անձանց միջին թվաքանակը	39,9 (E: 8,9; W:31,1) 2,1 (E: 2,0; W:2,1)	Մլն. տնտեսություն Բնակիչ/տնտեսություն
Կառույցների տարիքը	14 (E: 24; W:11) 14 (E: 20; W:12) 46 (E: 30; W:51) 13 (E: 12; W: 13) 13 (E: 12; W: 13)	Կառուցապատման % 2006 Մինչև 1918 1919-1948 1949-1978 1991թ-ից հետո
Վարձակալված բնակարանների մասը	58,4	% (2006)
Բնակարանների միջին չափը	90,2 (E:76,5; W:94,9)	քառ. մ
Միջին բնակարանի տարածք/անձ	42,9 (E:38,6; W:44)	քառ. մ (2006)
Սոցիալական բնակարանային ապահովման մասը բնակֆոնդում	6	%
Վարձակալության ծախսերը սոցիալական բնակարանային ապահովման մեջ՝ համեմատած ոչ սոցիալական բնակարանային ապահովման հետ	Վարձակալման ինդեքս* Գլխավոր վարձավճարը՝ 4,84 Չջեռուցվող մասի արժեքը՝ 1,41 Ջեռուցվող մասի արժեքը՝ 1,04 Սոցիալական բնակարանային ապահովում՝ 9-15 տոկոս պակաս գլխավոր վարձավճարից	 եվրո/քառ.մ/ամիս եվրո/քառ.մ/ամիս եվրո/քառ.մ/ամիս (2006) (2005)

* Ըստ տարածքների տարբերվում է:

6. Աղբյուրը՝ "Key Figures on Social Housing and energy overty-Germany", Project no EIE/07/146/SI2.466277, FiniSH (Finansial and Support Instruments for Fuel Poverty in Social housing), December 2007-May 2010

թվականի դրությամբ բնակարաններում են ապրում Գերմանիայի բնակչության 53,1 տոկոսը, առանձնատներում՝ 29,2, իսկ երկսենյականոց առանձնատներում՝ 16 տոկոսը, այլ՝ 1,8 տոկոսը: Տնազրկության տոկոսը կազմել է 1,7 տոկոս[7]: Բնակարաններից բնակիչների տեղաշարժման աստիճանով Գերմանիան միջին տեղ է զբաղեցնում եվրոպական երկրների շարքում: Բնակարանային ծախսերի ծանրաբեռնվածության աստիճանով Գերմանիան բարձր մակարդակ է գրավում եվրոպական երկրների շարքում՝ համեմատվելով Դանիայի կամ Հունաստանի հետ:

Սուբսիդավորված վարձակալված բնակարանների սեփականատերերը ապահովում են բնակարաններ սոցիալապես խոցելի խմբի բնակիչների համար: Հիմնական թիրախը ցածր եկամուտ ունեցող բնակչությունն է, որը պետք է դիմի սոցիալական բնականարային ապահովման իրավունքի վկայական (WBS) ձեռք բերելու՝ վարձակալելու կամ գնելու համար սուբսիդավորվող բնակարանային շինությունը: Եկամտի սահմանափակումը կայանում է հետևյալում. սոցիալական բնակարանային ապահովման իրավունքի վկայական կարելի է ստանալ մեկ անձ ունեցող տնային տնտեսության համար, երբ եկամուտը չի գերազանցում ամսական 1.200 եվրո գումարի չափը, երկու անձից բաղկացած ընտանիքի դեպքում՝ երբ ամսական եկամուտը չի գերազանցում 1.800 եվրո գումարի չափը:

Գերմանիան Եվրոպայում հայտնի է որպես վարձակալողների երկիր: Վարձակալական վճարների վերահսկողության համակարգը Գերմանիայում պետական մակարդակով վերացվեց 1960-ական թվականներին, տեղական վարձակալության վերահսկողությունը՝ 1980-ականներին: Դրանից հետո վարձավճարները սահմանվել են միայն վարձակալների ու սեփականատերերի կողմից: Ներկայումս ցածրարժեք բնակարանային ապահովման ծանրությունը ընկած է տեղական իշխանությունների ուսերին, մինչդեռ նահանգային ու դաշնային իշխանությունները ընդգրկված են բնակարանային ապահովման այլ ոլորտներում՝ ներառելով դատարկ բնակարանների ոչնչացումը Արևելքում և ոչ առավել բնակեցված տարածքներում՝ բարելավելով այդ շրջանների սոցիալական պայմանները: Արևելյան Գերմանիայում քաղաքային վերականգնումը որպես ծրագիր սկսվեց քաղաքներում՝ նախաձեռնելով ժողովրդագրական ու տնտեսական փոփոխություններ, կենտրոնանալով կառուցապատված բնակարանային ֆոնդի արդիականացման վրա: Այս նպատակներին հասնելու համար մի կողմից ոչնչացվել են հին շենքերը (2009 թ. 1 մլն. բնակիչներից տարհանված բնակարաններից ոչնչացվել է 350 հզ.-ը), մյուս կողմից՝ վերանորոգվել շատ բնակարաններ՝ հարմարեցնելով արդի պահանջներին: Գերմանիայի «Վարձակալության մասին» օրենքի համաձայն, վարձակալները պետք է տեղեկացվեն նախապես՝ երեք ամիս առաջ որակի կամ նախատեսվող վերանորոգման աշխատանքների մասին, ինչը պետք է հանգեցնի վարձավճարների բարձրացմանը: Արդիականացման ծախսերի 11 տոկոսից ավելին (բացառությամբ սուբսիդիաների) աշխատանքները վերջացնելուց հետո կարող են բաշխվել վարձավճարի վրա:

Ի տարբերություն եվրոպական այլ երկրների, Գերմանիայի կառավարությունը, որպես իրականացնող, հնարավորինս քիչ ուղղակի ազդեցություն ունի բնակարանային ապահովման ոլորտում: Եթե դիտարկենք վարչական վերահսկողության տեսանկյունից, ապա այստեղ գործում է համընդհանուր վերահսկողության դաշնային սխեման, համաձայն որի դաշնային կառավարությունը նահանգների միջոցով հանդես է գալիս թույլատրողի դերում: Իսկ տեղական իշխանությունները, ընդհակառակը, այն հիմնական ֆինանսական կառույցներն են, որոնք կարևոր դեր են ստանձնում բնակարանային ապահովման իրականացման գործում:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության սոցիալական բնակարանային ապահովման անցած հարուստ ուղին կարող է լավագույն օրինակ ծառայել Հայաստանի համար՝ ապահովելով մեր երկրում սոցիալական նշանակության բնակարանային ապահովման ձևավորման և զարգացման իրական հեռանկարներ:

7. Աղբյուրը՝ ԵՄ Եվրոպական հանձնաժողովի (Eurostat) 2009 թվականի տեղեկատվություն, http://appsso.eurostat.ec.europa.eu

1921 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՀԱՅՀԵՂԿՈՄԻ ԵՎ ՀՓԿ ԳՈՐԾԱԴՐԱԾ ՏԵՌՈՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայ պատմագրության վիճահարույց հարցերից է Փետրվարյան ապստամբության շրջանում տեռորի (քաղաքական սպանությունների, ռեպրեսիաների) կիրառման հարցը: Այս խնդրում գոյություն ունի միակողմանիություն: Մինչ օրս ստացվել է այնպես, որ խորհրդահայ պատմագիր, հուշագիր հեղինակներն ու նրանց ձայնակցողները, երբ խոսք է բացվում փետրվարյան իրադարձությունների շրջանում քաղաքական տեռորի ու սպանությունների մասին, հիշատակում են միայն Հայրենիքի փրկության կոմիտեի (ՀՓԿ) և նժդեհականների կողմից երկու հարյուրի հասնող բանտարկյալ կոմունիստների ու ակտիվիստների՝ դեպի Զանգեզուր տանող ճանապարհին խոշտանգելու, Գնդեվազի և Տաթևի բարձունքներից կիրճերը նետելու մասին: Իսկ խորհրդային պատմագիր հեղինակներին հակառակ՝ ՀՅԴ պատմագիր-հուշագիրներն էլ հիշեցնում են Երևանի կենտրոնական բանտում փետրվարի կեսերին Հայհեղկոմի ու Չեկայի կազմակերպած դաշնակցական բանտարկյալների կացնահարություն-սպանդի մասին:

Հասկանալի է, որ պատմագիտական առումով երկու մոտեցումներն էլ միակողմանի ու քաղաքականացված են: Դրա համար անհրաժեշտություն կա այդ խնդիրը ներկայացնել անկողմնակալ դիրքերից և տալ դրա իրական ու ճշմարիտ պատմությունն ու գնահատականը:

Պետք է տեսնել, որ փետրվարյան իրադարձությունների շրջանում տեռորիզմի գործողությունները հրահրվել են երկու կողմից էլ՝ թե՛ Հայհեղկոմի, թե՛ ՀՓԿ-ի: Սկզբում «պետական բանդիտիզմի»[1] քաղաքականությամբ տեռորը հրահրում էին բոլշևիկները, որոնց գլխավոր դերակատարը Չեկան էր: Իր հերթին

1. Նժդեհ Գ., Երկեր, հ. 1, Ե., 2002, էջ 469:

Համազասպ

արտակարգ իրավիճակի թելադրանքով կամա թե ակամա բռնի քայլերի է դիմել նաև ՀՓԿ-ն:

Երկկողմանի՝ բոլշևիկ-դաշնակցական, տեռորն ուներ իր նախապատմությունը և կապված չէր միայն փետրվարյան իրադարձությունների հետ: Տվյալներ կան, որ 1920 թ. հուլիս-նոյեմբերին Զանգեզուրում ժամանակավոր տիրապետության ժամանակ բոլշևիկները գնդակահարել էին 87 մարդու (Զաբուղի ձորում և Ղարադարասուի «ծակեր» ամառանոցում)[2]: Բացի այդ, նույն թվականի օգոստոսի սկզբին Չեկայի հրամանով դաժան խոշտանգումներով հաշվեհարդար էին տեսել ՀՀ պառլամենտի անդամներ Վահան Խորենիի, Արշակ Շիրինյանի և ուրիշների նկատմամբ[3]: Բոլշևիկների այս տեռորը պատասխանն էր 1920 թ. մայիսյան ապստամբության ժամանակ ՀՅԴ Բյուրո-կառավարության իրականացրած ինը բոլշևիկ ղեկավարների մահապատժի:

Հայհեղկոմի վարած ներքին և արտաքին 2,5-ամսյա քաղաքականությունը՝ թուրքասեր կեցվածքը, զանգվածային բռնագրավումները և բանտարկությունները, սպայության աքսորը և այլն, ի վերջո, լցրեց ժողովրդի մի լայն հատվածի համբերության բաժակը և փետրվարի կեսին վերաճեց ապստամբության: Հենց ապստամբների կողմից Երևանը գրավելու նախօրյակին Հայհեղկոմն ու Չեկան դիմեցին բացահայտ ահաբեկչական գործողությունների:

Գրականության մեջ ընդունված է, որ բոլշևիկների գնդակահարությունները Երևանի կենտրոնական բանտում տեղի են ունեցել փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը, իսկ ոմանք էլ համարում են փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը: Մեր կարծիքով տեռորի գործողությունները տեղի են ունեցել երկու գիշերներին էլ: Այդ է հաստատում Ս. Վրացյանի այն վկայությունը, որ փետրվարի 18-ին նախորդող «երկու գիշերները հաջորդաբար տեղի էին ունեցել տմարդի կոտորածներ»[4]:

Ավելին՝ հայ բանասեր ու պատմաբան Ա. Ալպոյաճյանը, որ մասնակից ու ականատես է եղել փետրվարյան իրադարձություններին, թարմ տպավորություններով գրել է «Անկախ Հայաստան» վերտառությամբ հոդվածաշար: Նա պատմում է, որ «փետրվարի 14-ին առաջին անգամ կատարվեցին գնդակահարություններ. նույն օրը գնդակահար եղան 14 հոգի, որոնց մեջ էին Համազասպը, գնդ. Ղորղանյանը և այլք»[5]: Իհարկե, Ա. Ալպոյաճյանը սխալվում է Համազասպի և Ղորղանյանի գնդակահարության օրվա հարցում: «Ամեն օր,- շարունակում է Ա. Ալպոյաճյանը,- նախորդ օրը գնդակահար եղողներու ցանկը կփակցնեին փողոցները, որպեսզի ժողովուրդը գիտնար և ահաբեկվեր: Այսպես շարունակվեցավ 4 օր: Պոլշևիկները ծրագրած էին 600 հոգի մահով պատժել, սակայն իրագործելու ժամանակ չունեցան»[6]:

Փաստերը ցույց են տալիս, որ Երևանի բանտում գլխավոր իրադարձությունները ծավալվել են փետրվարի 16-ի լույս 17-ի և փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերները, երբ արդեն քաղաքը շրջապատված էր ապստամբական զինուժերի կողմից և անմիջական սպառնալիք էր կախվել նրա գրավման համար: Չկան հանգամանալի տվյալներ

2. Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Ե., 2006, էջ 201:
3. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Ե., 2005, էջ 284:
4. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 565:
5. Ալպոյաճյան Ա., Անկախ Հայաստան, 1 սեպտեմբերի 1920 թ.- 1 սեպտեմբերի 1921 թ., մաս Ա. // Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», ԺԶ տարի (1922 թ.), Կ. Պոլիս, 1923, էջ 252:
6. Նույն տեղում:

այդ երկու գիշերներին գնդակահարված մարդկանց վերաբերյալ: Խմբապետ Մարտիրոսի հայտնած տվյալներով այդ օրերին Չեկայի ձեռքով կացնահարվել են 75 հոգի, որից փետրվարի 16-ի գիշերը՝ 25 հոգի: Մարտիրոսը վկայում է, որ սպանվածների ցուցակը եղել է իր ձեռքում: Կացնահարված 75 մարդկանցից 25-ը եղել են դամարլվեցիներ[7]: Պատմաբան Ա. Սիմոնյանը նշում է, որ փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը բոլշևիկները սպանում են մոտ 40 բանտարկյալի, այդ թվում Համազասպին և Մակեդոնին[8]:

Փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը Երևանի կենտրոնական բանտում գնդակահարվել է (ավելի ստույգ՝ կացնահարվել է) 22 բանտարկյալ: Նրանց թվում են եղել խմբապետ Համազասպ Սրվանձտյանը, գնդ. Նիկոլայ Ղորղանյանը, Արտուշ խան Շահրիարցյանը, Բանվոր Սերգոն, խմբապետ Մակեդոն Բաշգառնեցին, սեբաստացի Վարդան Բակուրը և ուրիշներ: Փաստենք, որ Համազասպի տմարդի սպանությունը կապված է եղել այն հանգամանքի հետ, որ Ավիսը անձնական թշնամանք է ունեցել նրա հանդեպ դեռ 1918 թ. Բաքվի կոմունայի ժամանակներից, իսկ գնդապետ Նիկոլայ Ղորղանյանինը ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը բացատրում է նրանով, որ 1920 թ. մայիսյան ապստամբության ժամանակ ՌՀԿ-ի կողմից ապըստամբների կարմիր բանակի շտաբի պետ նշանակված գնդ. Կորգանովը իբր ինքնագլուխ հրամաններ է տվել և լրտեսություն արել հօգուտ դաշնակցականների: Դրա համար էլ խորհրդային իշխանության որոշմամբ 1921 թ. փետրվարին նա կացնահարվել է բանտում[9]: Փետրվարի 21-ին Երևանում տեղի է ունեցել ապստամբության 40 զոհերի թաղումը[10]: Բոլշևիկների գազանությունների մասին ՀՓԿ-ի պաշտոնաթերթ «Ազատ Հայաստան»-ը գրում է հետևյալը: Իրենց «ոճիրները ծածկելու համար նրանք բանտում բացել են գաղտնի հորեր և դրանց մեջ թաղել անդամահատված ու խոշտանգված զոհերին»[11]: Երևանյան նախկին 9-րդ գնդի մատակարար Հակոբ Արաբյանի հայտնած տվյալներով բոլշևիկների՝ Երևանից քաշվելուց հետո բանտի հորերից հանվել է 70 մարդու դիակ[12]: Բանտի հորերում լցված տասնյակ մարդկային դիակները հաստատում են Ա. Ալպոյաճյանի տեղեկությունը, որ գնդակահարությունները սկսվել են ավելի վաղ՝ փետրվարի 14-ից:

Կացնահարությունների վերաբերյալ խորհրդային առանձին հեղինակների մոտ տեսակետ է արտահայտվում, որ 21 մաուզերիստների՝ իբրև թե չեկիստների կողմից կացնահարության մասին մեղադրանքը դաշնակցականների սադրանքն է: Զարգացվում է այն միտքը, որ իբր դաշնակներն են կացնահարել չեկիստների կողմից գնդակահարված ակտիվիստների դիակները, որպեսզի ցուցադրեն ժողովրդին և հակաբոլշևիկյան տպավորություն ու տրամադրություն ձևավորեն[13]:

Այս կապակցությամբ կարելի է տալ հետևյալ բացատրությունը. հայտնի է, որ բանտում կատարված այդ նախճիրը կատարել են հատուկ դրա համար վարձված թուրք մսագործները (դասաբներ): Հարց է ծագում. ո՞վ էր հրավիրել և ի՞նչ գործ ունեին թուրք մսագործները խորհրդային բանտում: Կնշանակի՝ նրանց բանտ էին հրավիրել ու կացնահարության հրահանգ էին տվել չեկիստները: Այլապես ստացվում է, որ դաշնակցականները կացնահարել և այլանդակել են իրենց հարազատ ընկերների՝ Համազասպի, Մակեդոնի և մյուսների դիակները միայն այն բանի համար, որ տպավորություն ստեղծեն հասարակության մեջ բոլշևիկների անմարդկային վարքագծի վերաբերյալ: Պետք է տեսնել, որ Հայիեղ-

7. Աբրահամյան Մարտիրոս-Բաբգառնեցի, Իմ հիշելի հուշերը, // Հայ դատի մատենաշար, Թեհրան, 1978, թիվ 7, էջ 158:
8. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը, Ե., 2000, էջ 417:
9. Ղարիբջանյան Գ. Բ., Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Ե., 1955, էջ 377:
10. «Ազատ Հայաստան», Երևան, 1921, 22 փետրվարի:
11. Նույնը, 23 փետրվարի:
12. «Վերջին լուր», Կ.Պոլիս, 1921, հուլիսի 4:
13. Амирханян Ш.М., Из истории борьбы за советскую власть в Армении, Е., 1967, с. 127-128, «Կոմունիստ», Երևան, 1921, թիվ 62, ապրիլի 10:

կոմի նախորդ 2,5 ամիսների գործունեությունը արդեն որոշակի հայացք ձևավորել էր հայ հանրության մեջ բոլշևիզմի իրական էության վերաբերյալ:

Բոլշևիկյան տեռորը փետրվարի 18-ով չի ավարտվում: Դիմենք փաստերի: Փետրվարի 18-ի երկրորդ կեսին դեպի Ղամարլու և Վեդի նահանջող բոլշևիկները և նրանց զորքը մեծ ավերածություններ են գործել: Ղամարլուի ճակատի հրամանատար Մարտիրոսը վկայում է, որ միայն Ղամարլուի բանտում խոշտանգվել են 45 երիտասարդներ, այդ թվում՝ 18-ամյա դաշնակցական մի աղջիկ[14]: Մեկ ուրիշ տեղեկությամբ բոլշևիկները Ղամարլուի շրջանում գնդակահարել են 60 գյուղացիների[15]:

Հայհեղկոմի փետրվարի վերջի հարձակման ձախողումից հետո, մարտի մեկին՝ նահանջելիս, բոլշևիկները և նրանց զինուժը Ղամարլուի գյուղերում սպանել են 100-ից ավելի գյուղացիների, որոնց դիակների մի մասը հայտնաբերվել է գինու և օղու (չանչի) հորերի և գինու մեծ տակառների (կարասների) մեջ, իսկ մյուս մասը թաղված է եղել գոմաղբի կույտերում: Դիակների մի մասի վրա էլ, փայտ ու աթար դարսելով, այրել են[16]:

Տեղեկություններ կան, որ բոլշևիկները տեռորիստական բնույթի գործողություններ են իրականացրել նաև այլ վայրերում: Մի տեղեկությամբ՝ բոլշևիկյան պատժիչ ջոկատը Ելենովկայի մոտ գնդակահարել և Սևանա լիճն է լցրել 150 թուրքահայ գաղթականների[17]: Տվյալներ կան, որ իր հերթին տեռոր է իրականացրել նաև Դիլիջան-Ղարաքիլիսայի ռազմահեղափոխական կոմիտեն և անձամբ նրա ղեկավար, չեկիստ Գ. Աթարբեկյանը: Այս կապակցությամբ Գ. Օրջոնիկիձեն մարտի 18-ին Գ. Աթարբեկյանին ուղղված հեռագրում զգուշացնում էր վերջինիս, որ իրեն հասած տեղեկություններով նա իր գործողությունների շրջանում իրականացնում է անտեղի գնդակահարություններ, գնդակահարվում են գերիները և այլն: Գ. Օրջոնիկիձեն կտրականապես պահանջում էր վերջ տալ տեռորին, իսկ վերջում խնդրում էր հաղորդել, թե որքան մարդ է գնդակահարել[18]: Հարկ է նշել, որ բանտկալանավայրեր են գործել Էջմիածնում, Ախտայում, Աշտարակում, Ելենովկայում, Դիլիջանում, Նոր Բայազետում և այլն: Դրանցում բանտարկված մարդկանց մասին բավարար տվյալներ չկան: Արխիվային մի վավերագրից տեղեկանում ենք, որ մինչ ապստամբությունը բոլշևիկները Նոր Բայազետում ձերբակալել և բանտարկել էին 300 մարդու: Խմբապետեր Մակվեցի Մեսրոպի և Աղաբեկի կողմից

Նիկոլայ Ղորղանյան

փետրվարի կեսերին Նոր Բայազետը բոլշևիկներից ազատագրելուց հետո վերոնշյալ 300 բանտարկյալներից շատերի մարմինները գտնվել են մորթոտված[19]: Սակայն դրանց թիվը չի նշված: Կարելի է ենթադրել, որ համանման ճակատագրի են արժանացել նաև մյուս քաղաքների շատ բանտարկյալներ: Նման երևույթները ևս ոչ ավել, ոչ պակաս կարելի է բնորոշել որպես պետական տեռորիզմի դրսևորում սեփական քաղաքացիների նկատմամբ:

Միակողմանի չլինելու համար հարկ է նշել, որ իր հերթին քաղաքական բռնություններ ու սպանություններ է իրականացրել նաև ՀՓԿ կա-

14. Աբրահամյան Մարտիրոս-Բաշգառնեցի, նշվ. աշխ., էջ 168:
15. «Ազաս Հայաստան», Երևան, 1921, փետրվարի 25:
16. Նույնը, մարտի 5:
17. ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 50:
18. Геноцид армян (документы и комментарий), сост. проф. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 466.
19. ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 50:

Վահան Խորենի

ռավարությունը: Բնավ արդարացում չունեն ՀՓԿ-ի իրավապահ մարմինների այն գործողությունները, որոնց հետևանքով բռնությունների զոհ են դարձել ընդհանուր հաշվով շուրջ 200 կոմունիստ ու ակտիվիստ: Խորհրդահայ պատմագրության մեջ Երևանից մինչև Տաթև այդ զոհերի ընդհանուր թիվը նշվում է 204[20]:

ՀՓԿ-ի իշխանության չորս տասնօրյակներին, իհարկե, Երևանի և այլ բանտերում եղել են քաղաքական, լրտեսության, դավաճանության և այլ հանցանքներ կատարելու մեջ մեղադրվող անձինք: ՀՓԿ-ի նախագահ Ս. Վրացյանը հավաստում է, որ բանտերում նրանց նկատմամբ բռնություն չի գործադրվել, որ նրանք գտնվել են տանելի պայմաններում, և այդ մասին վկայել են ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանը, Պարսկաստանի հյուպատոսը, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և ուրիշներ:

Բայց և մյուս կողմից պետք է նշել, որ գործել է ՀՓԿ-ի ռազմադաշտային տրիբունալը և փետրվարի 19-ից մինչև մարտի 26-ը տարբեր մեղադրանքներով գնդակահարության է դատապարտել 48 մարդու, որոնցից 16-ին՝ հանցանքը կրկնելու համար[21]:

Գրեթե բոլոր հեղինակները և տպագիր նյութերը միաբերան հաստատում են, որ ապստամբության պարտության նախօրյակին՝ մարտի վերջին, Երևանի կենտրոնական բանտից դուրս են բերվել 63 կոմունիստ և ակտիվիստ բանտարկյալներ[22]: Պատմաբան Ի. Թայիրյանն այդ թվին հավելում է ևս 11 կոմունիստի, որոնց դուրս են բերել զինվորական բանտից: Նրանց տանում են Բաշ-Գառնի, որտեղից էլ պետք է փոխադրեին Զանգեզուր: Բանտարկյալների նկատմամբ Հայհեղկոմի և ՀՓԿ-ի վարքագծի տարբերությունն այն էր, որ եթե Հայհեղկոմը իր վտանգավոր բանտարկյալներին կացնահարեց հենց բանտում, ապա ՀՓԿ-ն կոմունիստ բանտարկյալներին իր հետ տարավ մինչև Զանգեզուր, որոնց մեծ մասը, սակայն, ճանապարհին կամ Տաթևում տարբեր ձևերով իրենց մահկանացուն կնքեցին:

Երևանի կենտրոնական բանտի 63 բանտարկյալների թվում է եղել Հայաստանի կոմերիտմիության կենտկոմի քարտուղար Արմենակ Բուդաղյանը, ում և ևս երկու հոգու հիվանդ լինելու, քայլել չկարողանալու պատճառով ճանապարհին սվինահարել և գլորել են ձորը: Նույն կերպ մինչ Քեշիշքենդ (Եղեգնաձոր) հասնելը, ճանապարհին սպանվում են կարմիր սպա Ռ. Պողոսյանը և զինկոմ Ն. Օլթեցյանը[23]:

Ապրիլի 10-ին վերոնշյալ բանտարկյալների խմբին են միացվել 34 դարալագյազցի կոմունիստներ ու ռազմագերիներ: Ճանապարհին՝ Գնդեվազում, բարձր քարափից անդունդ են նետվում մի տղայով՝ 12, իսկ մեկ ուրիշով՝ 22 կոմունիստ ու կարմիրբանա-

20. Ղարիբջանյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 460, Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967, էջ 322, Խուդավերդյան Բ., Զանգեզուրը (1917-1921 թթ.), Ե., 1988, էջ 165, Բարսեղյան Խ. Հ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գ. 2, Ե., 1975, էջ 550 և ուրիշներ:
21. Ղազախեցյան Վ. Ն., նշվ. աշխ., էջ 203:
22. ՀԱԱ, ֆ. 114, ց. 2 с , գ. 53, թ. 85, «Կոմունիս», 1921, ապրիլի 28, Ղարիբջանյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 460, Амирханян Ш.М., նշվ. աշխ., էջ 130, Таирян И., XI Красная армия в борьбе за установление и упрочение советской власти в Армении, Е., 1971, с. 267-268, Հակոբյան Ա. Մ., Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Ե., 1948, էջ 89, Խուդավերդյան Բ., նշվ. աշխ., էջ 165 և ուրիշներ:
23. Հակոբյան Ա. Մ., Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., էջ 9:

կային[24]:

Բազարչայում բանտարկյալներին են միանում 100-ի չափ գերի կարմիրբանակայիններ: Ճանապարհին՝ Անգեղակոթում, գնդակահարվել է 16 մարդ, իսկ Լծեն գյուղում՝ 17 հոգի: Ապրիլի 19-ին Տաթևի վանքում տեղավորել են ընդամենը 110 բանտարկյալի՝ 80 զինվորական և 30 քաղաքացիական անձանց: Նրանց նկատմամբ ռազմադաշտային դատարանը դատ է կազմակերպում և, պատմաբան Վ. Ղազախեցյանի հայտնած տվյալներով, 78 կոմունիստի և կարմիրբանակայինի՝ իբրև մահապատժի դատավճռի իրականացման ձև ստիպում են Տաթևի ժայռից նետվել կիրճը[25]: Տաթևում 6 հոգի երաշխավորությամբ և այլ պատճառներով ազատվում են[26]: Այսպիսով, եթե համեմատում ենք բանտարկյալների ընդհանուր (208 մարդ) և ճանապարհին ու Տաթևում սվինահարված, գնդակահարված կամ ժայռից ցած նետվածների թվերը, ապա կոմունիստ և կարմիրբանակային զոհերի թիվը կազմում է 138 մարդ: Հնարավոր է, որ ճանապարհին սվինահարված կամ գնդակահարված լինեն հիվանդ կամ այլևս քայլելու անընդունակ ևս մեկ-երկու տասնյակ բանտարկյալ: Կնշանակի՝ ընդամենը 208 բանտարկյալներից առնվազն 50-ը՝ հատկապես գերի կարմիրբանակայիններ, փախուստի, ներման կամ այլ ձևով կարողացել են խուսափել մահապատժից: Բացի այդ, ինչպես արդեն ասվեց, Տաթևի ժայռից ցած են նետել ոչ թե 104, այլ՝ 78 մարդու: Իրականությանը չի համապատասխանում խորհրդահայ պատմագրության մեջ տարածում գտած այն վարկածը, թե Նժդեհի հրամանով են Տաթևի ժայռից ձորը գլորել 104 հեղափոխականների[27]:

ՀՅԴ Գերագույն դատական ատյանի կողմից 1921 թ. սեպտեմբերի 4-ի հարցաքննության ընթացքում Գ. Նժդեհը հերքել է իրեն ուղղված մեղադրանքը՝ Երևանից Տաթև փոխադրված հայ և ռուս բոլշևիկ բանտարկյալներին սպանելու հրաման տալու մասին, նշելով, որ գործել է առանձին ռազմադաշտային դատարան՝ Ռուբեն Նարինյանի նախագահությամբ, և որ ինքը «ոչ միայն որևէ սպանություն կատարելու հրահանգ չի տվել, այլև՝ առհասարակ դատական գործին ամենևին չի մասնակցել»[28]:

Այսպիսով, Հայհեղկոմի և ՀՓԿ-ի իշխանության շրջանում երկուստեք քաղաքական հակառակորդների նկատմամբ իրականացվել է բռնաճնշումների և տեռորի քաղաքականություն, ինչը հետևանք էր ստեղծված արտակարգ իրավիճակի: Համեմատության տեսակետից բոլշևիկների գործադրած կարմիր տեռորը, սպանությունները աչքի են ընկել առավել դաժանությամբ: Բայց երկու դեպքում էլ դատապարտելի է տեռորի քաղաքականությունը: Ցավոք, հետագայում՝ 1930-ական թվականներին, բոլշևիկյան կուսակցությունը և խորհրդային կառավարությունը վերակենդանացրին ու շարունակեցին Ռուսաստանի և Հայաստանի քաղաքացիական պատերազմի շրջանի կարմիր տեռորի քաղաքականությունը բռնաճնշումների ձևով:

24. Таирян И., նշվ. աշխ., էջ 268, ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 28, թ. 18:
25. Ղազախեցյան Վ. Ն., նշվ. աշխ., էջ 202:
26. Հակոբյան Ա. Մ., Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., էջ 91:
27. Հակոբյան Ա. Մ., նշվ. աշխ., էջ 91, Ղարիբջանյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 460, Բարսեղյան Ս. Հ., նշվ. աշխ., գ. 2, էջ 550 և ուրիշներ:
28. Հարությունյան Ա., Գ. Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը, Ե., 2004, էջ 176:

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

ԻՐԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԱՅՍՕՐ ԿԱՄ ԵՐԲԵՔ

Արծրուն Հովհաննիսյան

Չնայած նրան, որ իսլամական այս հանրապետությունը համարվում է աշխարհի ամենափակ երկրներից մեկը, միևնույն է, Իրանը լիովին իրավունք ունի համարվելու Մերձավոր և Միջին Արևելքի ամենահզոր երկրներից մեկը: Փորձագետների համար շատ դժվար է գնահատել Իրանի ռազմական ներուժը, տեղեկությունները շատ աղոտ են և ոչ հստակ: Չնայած այդ ամենին, որոշակի տեղեկությունները, ընդհանրացումը թույլ են տալիս պնդել, որ Իրանի հզորությունը բազմավեկտոր է: Երկիրը ունի մեծ տարածք, օգտակար հանածոներով հարուստ ընդերք, արագ աճող բնակչություն, հարուստ և փայլուն պատմական անցյալ՝ իր զարգացած ազգային-մշակութային հիմքով:

Իրանա-իրաքյան պատերազմից (1980-1988 թթ.) հետո երկրի ղեկավարությունը կատարելով համապատասխան եզրակացություններ՝ բավականին մեծ ուշադրություն է հատկացնում երկրի պաշտպանունակությանը և դրա իրականացման միջոց ԶՈՒ-երին: Իրանական ԶՈՒ-երը բաժանված են երկու մասի՝ բանակը և Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ): Ըստ էության սրանք երկու՝ միմյանցից անկախ բանակներ են: Երկուսն էլ ունեն իրենց զորատեսակները: ԻՀՊԿ-ն փաստացի համարվում է երկրի կրոնական ղեկավարության բանակը, չնայած ԶՈՒ-երը ևս շատ ուժեղ կրոնավորված են, ինչը ամրագրված է նաև Իրանի սահմանադրությամբ: ԻՀՊԿ-ն իր կազմում է ընդգրկում նաև աշխարհազորը, այսպես կոչված ազգային ճակատը՝ «Բասիջ»-ը, ռազմավարական հետախուզադիվերսիոն գործողությունների պատասխանատու «Կոդե» գերատեսչությունը և այլն: Փաստորեն ԻՀՊԿ-ն ավելի բարձրակարգ բանակ է:

Ընդհանուր բանակի կառուցվածքը շատ նման է խորհրդային մոդելին, սակայն վերջինիս հրստակ կրկնությունը չէ: Երկիրը բաժանված է չորս շրջանի (օկրուգի), որից յուրաքանչյուրում կան մի քանի տարբեր դիվիզիաներ, յուրաքանչյուր երեք դիվիզիա կազմում է մեկ կորպուս: Ընդհա-

նուր առմամբ բանակը սպառազինված է ավելի քան 2000 հրասայլով, որոնց մեջ կան և հին ամերիկյան, անգլիական, խորհրդային, չինական մեքենաներ և բավականին ժամանակակից խորհրդային մեքենաներ: Կան նաև Իրանի սեփական արտադրանք համարվող «Zulfiqar» կամ «Zolfaqar», «Safir-74» և թեթև «Tosan» հրասայլեր: Բանակում կան ավելի քան 1000 այլ զրահամեքենաներ, ավելի քան 2000 հրետանային քարշարկվող միջոց, 300-ից ավելի ինքնագնաց մեքենա և ավելի քան 800 ռեակտիվ հրետանային միջոց:

Ռազմածովային ուժերը (ՌԾՈՒ) ամենահզորն են Պարսից ծոցի երկրների մեջ: Սպառազինության մեջ են գտնվում երեք խորհրդային «877ЭКМ» նախագծի սուզանավեր, մոտ մեկ տասնյակ կորվետներ, քիչ ավելի հրթիռային նավակներ, ավելի քան մեկ տասնյակ փոքր դեսանտային նավակներ, մի քանի տասնյակ փոքր պարեկային նավակներ և այլն: Պարսկական նավերը արդեն կատարում են հեռավոր նավարկություններ: Իրանի ՌԾՈՒ-երը սպառազինված են չինական «HY-2 Silkworm» և «YJ-2 (C-802)» հականավային հրթիռներով և անգամ արտադրում են դրանք, ինչը բնականաբար բավականին մեծացնում է զորքերի հզորությունն ու մարտունակությունը: Այս հրթիռներից մեկը 2006 թ. հուլիսի 14-ին, լիբանանյան պատերազմի ժամանակ, խոցեց իսրայելական «Hanit» կորվետը: Պարսկաստանում ստեղծվում է նաև սեփական սուզանավ՝ «Ghadir» նախագիծ, որոնց չափերը իհարկե մեծ չեն: Ջրատարողությունը կազմում է մոտ 150 տոննա, իսկ դրանց քանակը, ըստ տարբեր տեղեկությունների, արդեն անցնում է 10-ը:

Իրանի ռազմաօդային ուժերը (ՌՕՈՒ) բավականին խայտաբղետ են: Սպառազինության մեջ են գտնվում 60-ական միավորին մոտ խորհրդային «МиГ-29», ամերիկյան «F-4», «F-5», «F-14M» և չինականացված խորհրդային «F-7M» կործանիչներ: Կան նաև այլ սահմանափակ քանակով խորհրդային «Су-20», «Су-24» և «Су-25» ինքնաթիռներ, հետախուզական, տրանսպորտային, ուսումնական և այլ ինքնաթիռներ: Այլ գնահատականներով՝ ինքնաթիռների քանակը բավականին պակաս է: Ուղղաթիռների ընդհանուր քանակը անցնում է 600-ից, սակայն դրանցից մարտական-հարվածային են մոտ 100-ը: Չնայած

«Zulfiqar»

նույնպես խայտաբղետ, սակայն բավականին հզոր են Իրանի ՀՕՊ ուժերը, քանի որ վերջինս սպառազինված է ամերիկյան և խորհրդային ինչպես հին, այնպես էլ ռուսական նոր համալիրներով: Մեծ հետաքրքրություն առաջացավ ռուսական «С-300» համալիրների մատակարարումների հետ: Ըստ որոշ տեղեկությունների՝ այդ համալիրների որոշ բաղկամասեր մատակարարվել էին, հետո ռուսական կողմը հրաժարվեց դրանց մատակարարումից, սակայն զորահանդեսների ժամանակ պարսկական կողմը ցուցադրում է համալիրներ, որոնք շատ նման են ռուսական «С-300»-ներին: Հավանաբար դրանք ռուսական համալիրի չինական նմանակներն են (դրանք կոչվում են HQ9) կամ դրանց արդեն տեղայնացված պարսկական նմուշները: Ռուսական կողմի մատակարարման մերժումից հետո Իրանի ղեկավարությունը հայտարարեց այն մասին, որ իրենք կըստեղծեն սեփական համալիրներ, ինչը նորից հարցը տանում է դեպի չինական կողմի հետ համագործակցության: Ընդհանրապես իրանյան ռազմաարդյունաբերական համալիրը մեծ կապեր ունի չինական կողմի հետ:

Ներկայումս աշխարհի շատ փորձագետների ուշադրությունը սևեռված է հիմնականում պարսկական հրթիռային տեխնոլոգիաների վրա, որոնք տարեցտարի նոր ձեռքբերումներ են արձանագրում: Ամեն ինչ նորից սկսվեց իրանա-իրաքյան պատերազմից: Չնայած նրան, որ Իրանը դեռ վաղուց ԱՄՆ-ից ստացել էր «MGM-52 Lance» տեսակի մարտավարական բալիստիկ հրթիռներ, առաջինն այս պատերազմում նման հրթիռներ կիրառեց Իրաքը: Դրանք խորհրդային հայտնի օպերատիվ-մարտավարական «Р-17

(проект 8К14, SS-1c Scud-B комплекс 9К72 К-300 Эльбрус)» հրթիռներն էին[1]: Իրանը կարճ ժամանակ անց նման հրթիռներ ստացավ Լիբիայից, հրթիռներ և տեխնոլոգիական օգնություն՝ Չինաստանից, Հյուսիսային Կորեայից: Տարբեր տվյալներով՝ մինչև պատերազմի ավարտը Իրանը, հիմնականում արտասահմանյան օգնությամբ, յուրացրեց խորհրդային «Р-11» հրթիռի հիման վրա ստեղծված «Շահաբ-1» իրանյան տարբերակի արտադրությունը, որոնցից մի քանի տասնյակ արձակվեց իրաքյան քաղաքների ուղղությամբ:

Ըստ տարբեր տվյալների՝ երկու կողմերը միմյանց վրա, հիմնականում «քաղաքների պատերազմ»-ի ժամանակ, արձակել են ավելի քան 600 հրթիռ:

Իրանը արդեն վաղուց ակտիվորեն համագործակցելով տարբեր երկրների հետ զարգացնում և հզորացնում է իր ՋՈՒ-երն ու ռազմաարդյունաբերական համալիրը՝ առանցքային տեղ հատկացնելով հրթիռներին: Չնայած նրան, որ տեղեկությունները այս մասին բավականին աղքատիկ են, այնուամենայնիվ մամուլում երբեմն հայտնվում են որոշակի տեղեկություններ, որոնցից կարելի է կատարել համապատասխան եզրակացություններ: Վերջին տարիներին Իրանում մշակվել կամ վերափոխվել է ավելի քան 10 տեսակի «երկիր-երկիր» դասի հրթիռ:

Անվանումը	Հեռահարությունը		Քաշը, կգ		Շեղումը, մ
	Նվազ.	Առավ.	Ընդ.	Մարտ.	
610 մմ Zelzal-2	-	200	-	600	-
355 մմ Nazeat	-	90	950	150-180	-
333 մմ Fajer-5	-	70	-	110	-
320 մմ WS-1	-	80	-	150	-
230 մմ Oghab	-	40	230	70	2000
CSS-8 (M-7)	-	150-180	-	190	-
Shihab-1 (Scud-B)	50	300	5862	989	900
Shihab-2 (Scud-C)	-	55 -700	6400	700	2000
Shihab-3 (Zelzal-3)	-	1300-1500	16000	760-1100	
Shihab-3D (Zelzal-3D)	-	1500-3000	16500	760-1200	-
Shihab-4	-	1800 – 2000	22000	750-1000	-
Shihab-5 (Kosar)	-	3500 - 4000	80000	400-1000	-
Shihab-6 (Kosar)	-	5500 - 6400	-	400-1200	-
Sajjil	-	2000-2500	26000		

1. Արդեն հիշատակված խորհրդային «Р-17» (проект 8К14, SS-1c Scud-B комплекс 9К72 Р-300 Эльбрус), օպերատիվ-մարտավարական հրթիռներն աշխարհում ամենաշատ կիրառվածներն են: Այս հրթիռը ստեղծվել է 1950-ական թվականների կեսերին, սակայն 1970-80-ական թվականներից դարձել է թույլ զարգացած երկրների հրթիռային տեխնոլոգիաների զարգացման հիմնաքարը:

Առանձնակի ուշադրության են արժանի «Shahab-3» և «Shahab-3D» հրթիռները: Դրանք իրենցից ներկայացնում են հյուսիսկորեական «No-Dong» հրթիռների տեղայնացումը, որի աշխատանքները վարվում են 1994 թ.: Սրանք առաջին իրանյան հրթիռներն են, որոնց հեռահարությունը հասնում է մինչև Իսրայել:

Հաջորդ նախագծերը ավելի ամբիցիոզ են, նպատակ ունեն ավելի մեծ ցուցանիշների հասնել և իրենցից ներկայացնում են հյուսիսկորեական հրթիռների, որոնք էլ իրենց հերթին՝ խորհրդային հին հրթիռների նախագծերը:

Սա պարսկական բալիստիկ հրթիռների ոչ ամբողջական ցանկն է ու այն տվյալները, որոնք հայտնի են: Դրանցից շատերը դեռ լիովին ավարտված վիճակում չեն և ներկայումս գտնվում են ստեղծման կամ փորձարկման փուլում: Յուրացվում են ստորգետնյա պահոցները, կառավարվող տեխնոլոգիաները և այլն: 2009 թ. պարսկական հրթիռի միջոցով արձակվեց նաև սեփական արտադրության արբանյակ. սա արդեն բավականին մեծ ձեռքբերում կարելի է համարել: Հրթիռները հիմնականում մշակվում են չինական, պակիստանյան կողմերի, ինչպես նաև այլ մասնագետների օգնությամբ, ունեն տարբեր հեռահարություններ, իսկ դրանց ընդհանուր քանակը բավականին մեծ է:

Զորավարժությունների ժամանակ այդ հրթիռների քանակը և կիրառությունը գնալով ավելի ազդեցիկ է դառնում: Հրթիռների ոլորտում պարսկական մասնագետների ձեռքբերումները ավելի իրատեսական են դարձնում միջուկային զենքի իրականացումը: Միայն միջուկային տեխնոլոգիաների ուսումնասիրության կենտրոնների քանակը հասնում է 10-ի:

Իրանական ռազմարդյունաբերության մակարդակը օր-օրի բարձրանում է: Արտադրվում են ինքնաձիգներից (Khaybar KH2002) մինչև բալիստիկ հրթիռներ ու կործանիչ ինքնաթիռներ: Բավականին հետաքրքիր ձեռքբերումներ է արձանագրում իրանական ինքնաթիռաշինությունը: Արդեն ստեղծվել է «Tazarv» ուսումնամարտական ինքնաթիռը, ամերիկյան «F-5» կործանիչի հիման վրա նախագծել են սեփական «Saegheh» կործանիչը, որը Իրանին դարձրեց գերձայնային կործանիչներ արտադրող երկիր: Սակայն պարսկական ինքնաթիռաշինության ամենահետաքրքր-


«Karrar»

«Ra'd»

«Tazarv»

«Bavar»

«Saegheh»

«Shafagh»

քիր նախագիծը «Shafagh» կործանիչն է, որը դեռ ընթացքում է: Կործանիչի նախագծով զբաղվում է Iran Aircraft Manufacturing Company (պարսկերեն՝ HESA) ընկերությունը, որն արդեն որոշակի փորձ ունի այս գործում: Նման ինքնաթիռի ստեղծումը բավականին բարդ գործ է, մասնագետները օգտվում են որոշակի ռուսական և մասնավորապես չինական տեխնոլոգիաներից: Հետաքրքիր են տեղեկությունները իրանական անտեսանելի «Sofreh Махи» ինքնաթիռի մասին: Իրանցի մասնագետները աշխատում են նաև բավականին բարդ թռչող սարքեր հանդիսացող էկրանաթիռների ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես, արդեն ստեղծել են փոքր «Bavar-2» էկրանաթիռը, որը հատկապես ծովային հետախուզության համար կարող է լայն կիրառություն ունենալ:

Բավականին հետաքրքիր են պարսկական անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) նախագծերը, որոնց թվում՝ նաև անտեսանելի տեխնոլոգիաներով: Այս խնդրով պարսիկ մասնագետները սկսել են զբաղվել դեռ 1980-ականների կեսերին: 1991 թ. կոալիցիոն ուժերին պատկանող մի քանի նման սարքեր պատահմամբ հայտնվեցին Իրանի տարածքում: Այդ նմուշների, ինչպես նաև խորհրդային ԱԹՍ-ների ուսումնասիրությունները հիմք ծառայեցին որոշակի աշխատանքների համար: Երկար ժամանակ չպահանջվեց, որ իրանցի մասնագետները ստեղծեն բավականին լավ տվյալներ ունեցող սեփական արտադրանք: 2005 թ. ցուցահանդեսի ժամանակ նրանք ցուցադրել էին «HESA» ընկերության կողմից ստեղծված «AM-79», «Ababil-1», ինչպես նաև «Qods» ընկերության «Saeghe-2», «Talash-1/2» և «Mohajer-2» ԱԹՍ-ները: Առաջին ընկերությունը զբաղվում է հիմնականում ալյումինե կառուցվածքով, իսկ երկրորդ ընկերությունը ունի նաև կոմպոզիցիոն մետաղների հետ աշխատելու փորձ: Իրանցի մասնագետները խոստովանում են, որ իրենք դեռ զիջում են արևմտյան շատ ընկերությունների, սակայն բավականին փորձ արդեն ունեն և աշխատում են նոր սերնդի ԱԹՍ-ների վրա: Մասնավորապես, 2010 թ. հանրությանը ներկայացվեցին «Ra'd» և «Karrar» անունները կրող ԱԹՍ-ներ, որոնք շատ հետաքրքիր տեսք ունեն: Դրանք հավանաբար առաջին պարսկական ԱԹՍ-ներն են, որոնք ունեն ռեակտիվ շարժիչներ: Ըստ որոշ

մասնագետների, ինչպես նաև Պարսկաստանի նախագահի հայտարարության, դրանք կարող են նույնիսկ մարտական հարվածներ հասցնել՝ կրելով ռումբեր և հրթիռներ: Այս տեղեկությունները որոշակի կասկած են հարուցում: Այս սարքերը այնքան մեծ չեն, դրանց կառուցվածքը մեծ հույսեր չի ներշնչում հայտնաբերման առումով, իսկ կառուցվածքային շատ համակարգեր հավանաբար վերցված են արտասահմանյան նախագծերից: Իրանական ԱԹՍ-ների ստեղծողների և առհասարակ ավիաարդյունաբերության համար շատ լավ նվեր էին 2011 թ. հունվարին և հատկապես հուլիսի 20-ին իրենց տարածքում խոցված ամերիկյան ԱԹՍ-ները: Մամուլում հայտնվել են տեղեկություններ այն մասին, որ այդ սարքերը ուսումնասիրվել են անգամ Մոսկվայում: Զարմանալին, սակայն, այն է, որ հուլիսի 20-ի դեպքը տեղի է ունեցել Կում քաղաքի մոտ, որը գտնվում է Իրանի գրեթե կենտրոնում:

Իրանի ռազմաարդյունաբերական համալիրը տարեցտարի հզորանում է, մասնավորապես ստեղծվում է սեփական դպրոց, ինչը ամենակարևորն է: Հիմնական խնդիրը նորագույն տեխնոլոգիաներն են, որոնց յուրացման համար կան բազում արգելքներ: Չնայած Արևմուտքի մեծ ջանքերին՝ իրանական գիտական պոտենցիալի և ռազմաարդյունաբերական համալիրի առաջընթացի տեմպերը նախանձելի են նույնիսկ նման մեծ խոչընդոտների դեպքում: Նման մեծ ջանքերի և միջոցների ներդրումը չի կարող ապարդյուն անցնել, ոչ հեռավոր ապագայում Իրանին կհաջողվի ստեղծել շատ հզոր և ժամանակակից ռազմաարդյունաբերական համալիր: Այսօր շատ է խոսվում Արևմուտքի և Իսրայելի կողմից Իրանին հարված հասցնելու մասին: Ներկայումս Իրանի ռազմական պոտենցիալը դեռ բավարար չէ արևմտյան օդա-ծովային մասսայական հարվածներին դիմակայելու համար, սակայն կարճ ժամանակ անց, երբ Իրանը դառնա միջուկային տերություն, Արևմուտքի համար անհնար կլինի նման գործողություն իրականացնել: Իրանին հարվածելը հնարավոր է այսօր կամ երբեք:

«Shahab»







Մերուժան Մօսիեան



Ատոս Պետրոսեան

Կամաւորական շարժման առաջին ամիսներին Մերուժան Մօսիեանի համար շատ դժուար էր: Ինչպէս ասում են՝ ՊԱԿը ճնած չէր, իսկ խորհրդային իշխանութիւններն այդ ժամանակ հակահայկական քաղաքականութիւն էին վարում, եւ կամաւորական տղաների համար շատ ծանր էր. հալածւում էին, գիշերցերեկ պիտի թաքնուած մնային, չորս կողմ դաւաճանութիւններ էին լինում, կասկածանքն էր ծաղկում եւ գործակալներ էին մտցնում ջոկատների մէջ, որոնք փորձուած լինելով եւ թիկունք ունենալով՝ հեղինակութիւն էին ձեռք բերում, եւ այդպիսի պայմաններին անհրաժեշտ էր խըստագոյնս գաղտնապահութիւն:

Երբ այդ ժամանակները անցան, պայքարը դարձաւ համաժողովրդական: Օգոստոսեան փոփոխութիւններից յետոյ հնարաւոր դարձաւ ինքնապաշտպանութիւնը: Մերուժանի եւ նրա ընկերների համար առաւել ուժով դրսեւորուելու հնարաւորութիւն բացուեց: Կարգազանցների հետ երկար չէր զրուցում, ասում էր. «Այսքան ժամանակ եմ տալիս, եթէ թերութիւնը շտկած չլինես՝ ինձնից չնեղանաս»: Նրանք գիտէին, որ եթէ Մերուժանը ասել է, ուրեմն պիտի գործողութիւնը հետեւի խօսքին: Հաշուի էին առնում նրա ասածը: Եւ Մերուժանի բնաւորութեան հետեւողականութիւնը հնազանդեցնում էր շատ-շատերին:

Մերուժանը շատ ակտիւ չէր պայքարի միտինգային փուլում, սակայն երբ եկաւ գործելու պահը՝ նա ազնաւուր դարձաւ: Անծանօթ մարդկանց չէր հրաւիրում, որ մտնէին իր ջոկատի մէջ, այլ միայն իր ընկերներին, որոնց լաւ էր ճանաչում, այն էլ խիստ ընտրութեամբ: Նա զգուշացրել էր տանը, որ իրենց հետ ամեն ինչ կարող է պատահել եւ պէտք է պատրաստ լինեն ամեն տեսակ լուրի: Նաեւ բոլոր ընկերները պիտի լինեն առաջին գծում եւ առանձնաշնորհեալ, արտօնեալ վիճակում ոչ ոք պիտի չլինի: Եւ այդ արդար հաւասարութիւնը պահպանուել է պայքարի կամաւորական շրջանում, երբ մարդ արագ հասնում է ինքնաճանաչման եւ ամենքն էլ կարողանում էին իրար ճանաչել: Եւ պատահական չէ, որ պատերազմի իսկական հերոսների մեծ մասը իրենց որպէս այդպիսին դրսեւորել են հէնց այդ տարիներին: Նրանք նուիրեալ հոգիներ էին, եւ այդ ժամանակը կարելի է համարել ընդհանրական հերոսութեան շրջան: Արցախական աշխարհում քաջերի եւ խիզախ-

ների պակասութիւն երբեմ չի զգացուել, իսկ անկախութիւն նուաճելուց յետոյ մէկդարեայ զսպանակուած եռանդը արտայայտում էր շռայլ ուժականութեամբ:

Մերուժան Մօսիեանին ճանաչող բազմաթիւ մարդիկ վկայում եւ հաստատում են, որ նա եղել է իր հայրենիքի նուիրեալը: Նա զինակցում եւ լծակցում էր բոլորի հետ, ովքեր լծուած էին Արցախի ազատագրման եւ պաշտպանութեան գործին եւ բնականաբար ու առաջին հերթին՝ Մոնթէ Մելքոնեանին:

Մերուժանը Մարտունիում ազատագրական պայքարին մասնակցել է հէնց սկզբից իբրեւ առաջնամարտիկ եւ երբ Մոնթէ Մելքոնեանը եկաւ Մարտունի՝ նա ամեն կերպ աջակցում էր նոր հրամանատարին: Առաջին լուրջ ծրագիրը *Կուրապատկինն*, *Մուղանլար* եւ *Ամիրանլար* օտարաբնակ երեք գիւղերի ազատագրումն էր: Այս բնակավայրերից թշնամին անընդհատ հրակոծում եւ գնդակոծում էր Մարտունին եւ շրջակայ բնակավայրերը, լարուած վիճակում էր պահում շրջանը: Բացի այդ, տեղի էին ունենում անցանկալի բազմաթիւ երեւոյթներ, որոնք պէտք է արմատահանուէին՝ պաշտպանութեան մակարդակը բարձրացնելու համար: Մոնթէի ժամանելուց յետոյ՝ առաջին օրերին կատարուեց մեծ քանակութեամբ վառելանիւթի կողոպուտ, եւ պիտի պարզէր, թէ ինչ կերպ է դա տեղի ունեցել՝ դիտաւորեա՞լ, թէ անփութութեան հետեւանքով: Մերուժանն այդ ժամանակ ջոկատի հրամանատար էր. նախկին հրամանատարը՝ Արթիկը զոհուել էր եւ Մերուժանը փոխարինեց նրան: Վերոնշեալ երկու գործողութիւնների մէջ ի յայտ եկան Մերուժանի մարդկային եւ մարտական կարողութիւնները:

Իր արժէքային համակարգի գլխաւորը ընկերասիրութիւնն էր, յետոյ ընտանիք եւ այլն: Նրա ընտանիքը դրանից վնաս էր կրում, սակայն առանց զոհողութիւնների երբեւիցէ նշանակալից գործ չի կատարուել: Իր ճանապարհը ինքն էր ընտրել եւ գիտէր, թէ ինչ է սպասում իրեն: Թէեւ գումարտակի հրամանատար էր, սակայն ընկերների հետ միասին եւ նրանց հաւասար դիրքապահութիւն էր անում: Ընկերները յանդիմանում էին, որ այդպէս երկար չի դիմանայ:

Մերուժանը մասնակցել է նաեւ Շուշիի ազատագրման գործողութեանը, եւ այդ օրերի մասին մեզ պատմել է նրա համալսարանական ընկերը՝ Յովիկը, որն այդ ժամանակ Շուշիի ոստիկանապետի տեղակալն էր: Աղդամի դիրքերից վերադառնալիս Յովիկը պատահաբար հանդիպում է Մերուժանին: Գրկախառնւում են: Որպիսութիւնն իմանալուց յետոյ Յովիկն ասում է, որ Մերուժանի զօրամասի տղաների համար բան է բերել: *«Էդ պահին մի բան եղաւ, որ ֆիչ մնաց ողբերգական աւարտ ունենար: Զինուորները մեքենան բարձել էին իրենց համար անձնական անհրաժեշտութեան առրանքներ: Մերուժանին հազիւ կարողացայ հանգստացնել եւ յորդորել, որ այդպիսի բան պէտք չէ: Այլապէս դաժան պատժի կենթարկէր: Նա հասկացրեց, որ կենսական պարէնը, որից առաջին գծում գտնուողները օգտուելու հնարաւորութիւն չունեն, պէտք է կենտրոնացնեն եւ համահաւասար բաժանեն իրաւանչիր զինուորի: Անձամբ ինքը ռազմաւարը կենտրոնացրել եւ համահաւասար բաժանել է: Առաջին հերթին ցուցակագրում էր զոհեալների ընտանիքներին, վիրաւորներին, որոնք բուժում են կամ տկարացել են: Մերուժանի ընտանիքը շատ համեստ պայմաններում էր եւ իր համար որեւէ բան չի արել: Պահեստում ունեցել է ամեն ինչ, սակայն դրանից երբեւիցէ չի օգտուել իր տան համար:*

Մենք ուսանողական ընկերներ էինք եւ չնայած ես իրենից մեծ էի, բայց իսկական ընկերութիւնն իրենից եմ սովորել: Էն ժամանակ ընկերութեան մասին իմ պատկերացումը եւ հոգեբանութիւնս այլ էր: Երբ մէկը ինձ համար մի լաւ բան էր անում, ես պիտի ես չմնայի եւ պատասխանէի նոյն կերպ: Սակայն Մերուժանը ինձ հասկացրեց, որ ընկերներն ամեն պահի պիտի պատրաստ լինեն ամեն ինչի եւ ոչ թէ պիտի լաւութեան առեւտուր տեղի ունենայ: Եթէ անհրաժեշտ է, պէտք է եւ կեանքը նուիրաբերել: Հաշուենկատութիւն ընկերութեան մէջ պիտի չլինի: Կարծում եմ, որ դա Մերուժանի մօտ բնածին յատկութիւն էր, թէեւ սովորելն էլ չեմ ժխտում, քանզի ես էլ իրենից այդ բանը սովորեցի: Նա իմ հոգեբանութեան մէջ լուսաւոր բան մտցրեց»:

Մերուժանը յաճախ էր Յովիկին այցելում, մանաւանդ այդ ժամանակ Շուշիում էր Դաշնակցութեան գումարակը: Յովիկի նկատմամբ նա անփոփոխ հոգատար էր եւ նրա ընտանիքին շատ է օգնել պատերազմի ծանր տարիներին: Ալիւր էր բերում, չնայած այդ մասին ակնարկ բոլորովին չէր եղել: Նրա օգնութիւնները միշտ ճիշտ ժամանակին էին եւ կարծես երկնառաք լինէին: Իր գործելակերպն այնպիսին էր, որ միշտ խնդիրների տեղիք էր տալիս, եւ այդքան հոգատաշատ իրավիճակում ժամանակ էր գտնում մտածելու նեղն ընկած ընկերների, հարազատների մասին:

Արագ կողմնորոշում էր եւ ճիշտ որոշումներ կայացնում եւ իր վճիռների մէջ լիովին հետեւողական էր: Լռակեաց էր, աւելորդ բառ չէր ասի, չէր սիրում շատախօս տղամարդկանց: Պատահել է, որ մէկը մեքենաբար ասել է՝ գնանք Երեւան, ուտենք-խմենք՝ գանք: Մերուժանը դա կատարել է, որպէսզի ասի, թէ չի կարելի բառերի հետ խաղեր անել: Մէկի մտքով անցել է, իսկ ինքը դա կատարել է, որովհետեւ նա գործնական մարդ էր, իր խօսքի տէրը: Միայն մէկ անգամ չի պահել իր խօսքը, 93-ին, երբ իրեն սպասում էին, որպէսզի ծնունդը նշէին: Նա այլեւս չէր կարող գնալ:

Ի տարբերութիւն ուսանողական տարիների, նա պատերազմի տարիներին լիովին փոխուեց եւ ոգելից խմիչք բոլորովին չէր գործածում: Ընկերներն առիթ են ունեցել «Արծիւ» դիրքում հացի նստելու: Մի անգամ խաշ էին ուտում: Մերուժանը հարցրեց. «Օղի բերե՞լ էք»: Սեղանին օղու շիշ յայտնուեց: Ընդունուած բան է խաշի հետ մէկ-երկու բաժակ ըմպելը: Ընկերները չգիտէին, որ Մերուժանենք ուխտ են արել պատերազմական տարիներին ռազմաճակատում բնաւ չօգտագործել ոգելից խմիչք: Բաժակները լցրին, կենաց առաջարկեցին եւ միայն դրսից եկած մի հոգի խմեց: Երբ հարցրեց պատճառը, ասացին եւ պատմեցին մի դէպք, որ մի առաւօտ էդպէս խաշի են նստած լինում եւ տղաները չեն դիմանում եւ ուզում են կէս-կէս բաժակ լցնել: Մերուժանը հանգիստ մօտենում է եւ շիշը վերցնում ու նետում դուրս: Շիշը ջարդւում է եւ որեւէ մէկը ծղտուն չի հանում: Բոլորը նստում են եւ սկսում հանգիստ ուտել: Մարդ պիտի հաւատարիմ մնայ ուխտին:

Յովիկը ուզում էր ոստիկանութիւնից տեղափոխուել գործող բանակ եւ յատկապէս Մերուժանի գումարտակ, սակայն այդ օրերին նման հարցերը հասարակ ձեւով չէին լուծւում եւ որոշ ժամանակ պիտի անցնէր հարցի պատասխանը իմանալու համար: Յովիկը իր տղային ուղարկել էր Երեւան եւ նրան բերել էին, որ ծննդեան օրը մկրտեն Շուշիում: Սակայն մէկ շաբաթ Աղդամում էին եւ տանը ուտելու բան չկար: Ժամանում է Մերուժանը եւ երեխային մկրտում են ու ծնունդը նշում: Այդտեղ էր նաեւ Միհր Ջուլհաճեանը. համեստ, սակայն տպաւորիչ արտաքինով, գեղեցիկ մի երիտասարդ, որը նաեւ զարդարել է օրուայ իրադարձութիւնը իր աննման երգեցողութեամբ: Յովիկը զարմացած էր: Միհրը բոլորովին չէր խօսում, սակայն նրա խիզախութիւնը գրուանի տակ մնացող բան չէր, ինչպէս որ նրա վճիռն, լուսեղէն հայեացքից զգացւում էր բնաւորութեան ազնուականութիւնը: Նրա ամբողջ պահուածքը, կեցուածքը եւ շարժումներն

Մոնթէ

այդ էին արտայայտում: Քիչ էր խօսում, սակայն զգում էիր, որ նրա բնաւորութեան մէջ խօսուն շատ բաներ կան: Այդ օրը Յովիկենց տանը շատ մարդիկ կային, սպիտռֆահայեր, նկարահանողներ, թղթակիցներ: Դա եղել է 92 թուականի օգոստոսի 16-ին: Մերուժանը երգել է «Գեսաէն» երգը եւ նրանց պատուհանի տակ նստած մի կին լացել է: Մօտեցել են եւ իմացել, որ տղան Գեսաէնում է զոհուել:

Գեներալ Վլադիկ Խաչատրեանը դեռեւս փոխգնդապետ էր, երբ Ստեփանակերտում մի օր խնդրեցի պատմել Մերուժանի մասին:

«Մերուժանը Մարտունու շրջանում գումարտակի հրամանատար էր, իսկ ես Մարտակերտում՝ դիւիզիոնի հրամանատար: Թէ նա Մարտունու շրջանում ինչ գործողութիւններ է կատարել

կամ մասնակցել՝ չեմ կարող ասել, ականատես չեմ եղել, սակայն նա իր գումարակի մէկ մասով մասնակցել է Մարտակերտի շրջանի մարտերին, Գիլաբաղի եւ Քելբաջարի մարտերին է մասնակցել, նաեւ Պուշկինեալի ազատագրական գործողութեանը, նրա հեսագայ պաշտպանութեանը եւ վերջում, յունիսի 27-ին, իր գումարակով պաշտպանում էր, չհասած Լէոնարխ՝ Յակոբ Կամարիի ճակատի մեր ձախ թեւը, որտեղից հաւանական է, որ թշնամին շրջանցէր եւ անցնէր մեր թիկունք: Այդ տեղամասը պաշտպանում էր Մերուժանն իր տղաներով: Մեր պաշտպանական շրջանում Մերուժանի գումարակը Մարտունիի շրջանի գրեթէ բոլոր հրամանատարների հետ միասին, գնդի հրամանատար Աւոյի գլխաւորութեամբ, որտեղ էր նաեւ իր տեղակալ Մօսին: Մերուժանը այդտեղ իրօք հերոսութիւն ցուցաբերեց, թէ Քելբաջարում թշնամու կրակակէտի ոչնչացման ժամանակ եւ թէ հետախուզութեան ժամանակ: Նրանց կատարեալ հերոսութեանը մենք ականատես եղանք Գիլաբաղ եւ Ղանեաթաղ գիւղերի հանքի բարձունքը գրաւելու ժամանակ, որտեղ նրանք գնացին խիզախութեան եւ առանց հրետանային նախապատրաստութեան գրաւեցին բարձունքը: Մերուժանը երկու վիրաւոր տուեց, որոնցից մէկն իր հետախոյզ Կոմիտասն էր: Այնուհետեւ, երբ գրաւեցինք Պուշկի-եալը, դրանից յետոյ դրա պաշտպանութիւնը շատ ծանր էր: Ձախակողմեանը, որ աւելի բարձր էր, անուանում էինք Վիշկի-եալ (Աշտարակ), իսկ աջակողմեանը ադրբեջանաբնակ Փափրաւենդ գիւղի բարձունքն էր, որ անուանում ենք Գիլակ-սար: Այդ բարձունքները սեղի նման խրուած էին թշնամու դիրքերի մէջ եւ այդ Պուշկի-եալը մեր ձեռքին էր: Դրա պաշտպանութիւնը շատ դժուար էր, քանզի թէ դիմացից եւ թէ աջ եւ ձախ կողմերից անընդհատ հրետանային հզօր կրակ էր տեղում, հետեւակային գրոհներ էին լինում: Մերուժանի գումարակի տղաները մասնակցել են այդ բարձունքի պաշտպանութեանը:

Մեր պաշտպանական շրջանի համար աւելի կարեւոր պահը, որ մենք նախատեսել էինք, այն մեծ մարտն էր, որն ընդգրկում էր Լէոնարխ գիւղի 530 կէտից (բարձունք) մինչեւ այդ լեռնաշղթայի Պուշկի-եալ հատուածը: Մեր ուժը չէր բաւարարում, որպէսզի Յակոբ Կամարիի ձախ կողմը պաշտպանենք: Մի անգամ, երբ մտանք մարտի, թշնամին գրաւեց մեր թիկունքը այդ տեղամասով եւ այդ ժամանակ մեզ օգնութեան եկաւ Մերուժանը՝ Մարտունու տղաներով: Եւ այդտեղ իրենք պաշտպանական դիրքեր զբաղեցրին, եւ ընդհանուր պաշտպանութեան շրջթայի մէջ իրենց յանձնարարուած էր ամենակարեւոր օղակներից մէկը: Տղաները փայլուն կատարեցին իրենց առաջադրանքը եւ այդ օրն էլ յաջողեցինք գրաւել այդ բարձունքները թշնամուց:

Մերուժանին ես վերաբերում էի ոչ իբրեւ բարեկամի, այլ ընկերոջ: Մենք ընկերներ էինք: Նա պարզ ուրտով ընկեր էր, անշահախնդիր մարդ: Նրա մօս ազգային զգացմունքները հիմնաւորապէս էին վերլուծուած: Եթէ մենք մեզ երբեմն ազգասէր ենք անուանում, այդ ազգասիրութիւնը նրա մէջ արտայայտում էր լիակատար կերպով: Նրա մէջ միայն գաղափար կար: Նա պատմաբան էր եւ ամեն ինչ աւելի լաւ գիտէր, մեր պատմութիւնը, մեր ոգու առանձնայատկութիւնը, մեր բնոյթն ու էութիւնը, մեր պատմական ճակատագիրը: Նա աւելի լաւ էր պատկերացնում եւ նրա միակ երազանքը, որ բոլոր արցախցիների երազանքն է, տեսնել Արցախը ազատ եւ անկախ: Մերուժանի առաւելութիւնն այն էր, որ նա պիտի միշտ առաջինը դժուարութիւնները յաղթահարէր, նոր յետոյ ուրիշները դա անէին: Հիմա գուցէ, եթէ նոր սերունդներին պատմենք, անհաւանական թուայ. գումարակի հրամանատարը միշտ առջեւում էր իր աւտոմատով: Սակայն այստեղ հանելուկային բան չկայ. եթէ Ղարաբաղի հրամանատարները առջեւից չգնային, ինձ թւում է, թէ մենք յաղթանակ չէինք տանի ռազմադաշտում: Այ էս հոգեբանական պահը մեզ տարաւ դէպի յաղթանակ, որի առաջին օրինակներից մէկը Մերուժանն էր: Մէկ ուրիշ ընբռնում, ուրիշ լուծում չեմ տեսնում. եթէ հրամանատարը առջեւից է գնում, մնացեալ զինուորները պէտք է հետեւեն:

Մերուժանը եւ ընտանիքի լաւ հայր էր, եւ եղբայր էր, եւ շրջապատում լաւ ընկեր էր: Բոլոր ընկերները երդում են նրա արեւով: Չեմ տեսել երբեք, որ նա որեւէ մէկին աչքաթող անէր եւ այդքան մաքուր ու անշահախնդիր տղայ երեւի մեր կեանքում դժուար հանդիպենք: Ամենից առաջ եւ ամենից վեր ազգային գործը, որով եւ ինքն էր ապրում եւ ուրիշների էր համակում: Նա այդ իմաստով մոլեռանդ էր, ինչպէս ասում են առաջուայ երազողները, ազատութիւն երազողները: Մենք էլ երազող ենք եղել էդ ճանապարհի վրայ: Եւ երբ շատ մօս

էին յաղթանակի օնակատարութեանը՝ Մերուժանին կորցրին:

Տիկ. Գենիայի (Մերուժանի կինը) հետ զրոյցից:

Առաջին յուշ-պատկերը Մերուժանից վերաբերում է համալսարանի 3-րդ կուրսին: Նոր էր վերադարձել բանակից եւ սովորում էր Պատմական ֆակուլտետի Գենիայենց զուգահեռ կուրսում: Գենիան Պատմաբանասիրականում բանասէր էր: Դասերից Մերուժանը գրեթէ միշտ ուշանում էր: Միշտ մենակ էր գալիս, խոհուն, եւ նստում էր իր անփոփոխ տեղը: Չէր համբերում մինչեւ դասի վերջ եւ մի հայեացքով նայում էր դասախօսին եւ վերջինս գլխի թեթեւ շարժում էր անում, թէ՝ գնա: Դանդաղ ելնում էր տեղից եւ անշշունջ դուրս էր գալիս լսարանից, ինչպէս որ ներս էր մտել: Կեանքում էլ առհասարակ այդպէս լռին էր: Չէր սիրում իր անձի կամ արարքների մասին խօսել: Լռակեաց էր, ծխախոտը շրթին, մտածկոտ:

Իր ուսանող-ընկերային շրջապատը տղաներ էին եւ աղջիկների հետ բոլորովին չէր շփւում: Միգուցէ նրա մէջ արդէն հասունացած էր ազգի ազատագրութեան գաղափարը եւ դրանից էր իր մտածկոտ լռակեացութիւնը: Մերուժանն առաջիններից էր, որ յանձն առաւ այդ գաղափարի իրականացումը:

Ազգային շարժումը մտերմացրեց բոլորին, Մերուժանի եւ Գենիայի ճանապարհները զուգահեռուեցին: Հանրահաւաքները շարունակական լինելու համար հարկաւոր էր միշտ հրապարակը լիքը պահել, որպէսզի ռուսական զօրքը տեղ չգրաւէր այնտեղ: Եւ 12 օր շարունակ Ղարաբաղի բնակչութեան կէսից աւելին այդ հրապարակումն էր: Ուսանողները եւս այդ օրերն անցկացրին հրապարակի վրայ: Նրանք մտերմացել էին եւ համալսարանն աւարտելուց յետոյ ամուսնացան: Լաչինի միջանցքը դեռ չէր բացուել: Թուրքերը քարկոծում էին Հայաստանից եկող կամ գնացող բոլոր մեքենաները: Նրանց մեքենան բարեբախտաբար անվնաս անցաւ, առանց պատահարի, քանզի իրենց թուրքի տեղ էին դրել եւ ուշադրութիւն չդարձրեցին: Նորագոյ ամուսնական կեանքը սկիզբ առաւ ազգային պայքարին զուգընթաց: Այն օրերին դեռեւս բոլորը չէ, որ գիտակցում էին, թէ ինչ է կատարւում: Մանաւանդ Մարտունի քաղաքում հայ ու թուրք ապրում էին կողք-կողքի, իբրեւ հարեւաններ: Այդ թաղամասի հայերը շուտ զգացին, թէ որքան վտանգաւոր է այդպէս ապրելը: Սակայն Մերուժանը եւ իր ընկերները թոյլ չտուեցին հայերին ընկճուելու: Նոյն տներում հերթապահում էին՝ հետեւելով դարանակալ թշնամու շարժումներին: Այդ օրերին Մերուժանն աշխատում էր «Ամարաս» պարբերականում եւ միաժամանակ պատմութիւն էր դասաւանդում դպրոցի 10-րդ դասարանում: Տանը գրեթէ չէր լինում: Մարտունու բնակիչները, բացառեալ մի քանի հոգու, չգիտէին, թէ Մերուժանը ինչով է զբաղուած իր ընկերների հետ: Նրանք չգիտէին, որ Մերուժանը գիշերը զէնքը ձեռքին հերթապահում է, իրենց անդորրն է հսկում: Լուսաբացին գալիս էր տուն եւ առանց ժամանակ կորցնելու, գրիչը վերցնում էր եւ գնում դպրոց: Նման պահերին երբ կինը յորդորում էր, թէ դեռ ժամանակ կայ, թող մի քիչ պառկի, հանգստանայ, Մերուժանը հանգիստ պատասխանում էր. «Եթէ պառկեմ, մի քիչ քնելով չեմ հանգստանայ: Դասերից յետոյ կը պառկեմ: Դու էն ասա՝ դասի ծրագրային դրոյթները պատրաստե՞լ ես»: Մերուժանը չէր սիրում թէկուզ ձեւական կարգի թերութիւններ ունենալ: Նա իր մասնագիտութեանն այնքան էր տիրապետում, որ լոկ վերնագրերով վերյիշում էր ամբողջ բովանդակութիւնը, սակայն չէր ուզում տնօրինութեանը նեղացնել անգամ չնչին բաներով: Երբ կինը յիշեցնում էր զոհողութեան չափը եւ յորդորում էր ձեւական որոշ պահանջներ զանց առնել, Մերուժանը պատասխանում էր. «Գիտե՞ս, Գենիա, ոչ ոք տեղեակ չէ, թէ ես գիշերները ինչով եմ զբաղուած, որ չեմ հանգստացել եւ այլն, ոչ ուսուցիչները եւ ոչ աշակերտները: Դասերը պիտի այնպէս վարեմ, որ զոհունակութիւն պատճառեմ բոլորին: Պէտք չէ նեղուրտել»:

Արտակ Մնացականեան

Դասերից յետոյ գնում էր խմբագրատուն, կարգաւորում այնտեղի գործերը: Այնուհետեւ գալիս էր տուն եւ աւարտական խմբերի լաւ սովորող աշակերտների հետ պարապում պատմութիւն եւ դրանից յետոյ պառկում: Շատ կարճատեւ էր լինում հանգիստը: Զէնքը վերցնում էր եւ նո-

ից գնում հերթապահության: «Սկսած այն պահից, երբ երկու ընկերների հետ Խոջաենդ քաղաքի պաշտպանությունն էր կազմակերպել, մինչեւ գումարտակի կազմաւորումը, չեմ յիշում մէկ օր, որ երեկոյեան գար տուն եւ մինչեւ առաւօտ հանգիստ ննած լինէր»: «Յանկարծ տղաները ինով կընկնեն եւ դիրքերը անպաշտպան կը թողնեն»: Նա պիտի իսկէր, որ ուրիշները կատարէին իրենց պարտականությունը, թէեւ ինքն էլ մշտական հերթապահում էր: «Դու տանը նստած՝ չես կարող պատկերացնել, թէ ինչ ասել է անձնական օրինակ»՝ այդպէս էր նա լուսաբանում կնոջը, բնաւ իրեն չխնայելով:

Սիրում էր իր ընտանիքը, հարազատներին, իր հոգատար բնաւորութեամբ ձգտում էր նրանց տրամադրությունը բարձրացնել: Երեխաները հայրիկին շատ էին սիրում եւ կարօտ էին նրա ներկայութեանը: Միասին լինելու կարճ ժամերին նրանց նստեցնում էր իր կողքին եւ արտասանում «Սասնա Ծռեր»ից կամ «Շահ-Նամէ»ից: Երկուսն էլ գրեթէ լիովին անգիր գիտէր: Երեխաները համակ ուշադրութեամբ լսում էին, կարծես հասկանալով:

Ռազմական իրադրությունը վատացաւ: 91-ի նոյեմբերի 6-ից գնդակոծումը փոխուեց «Ալազան» տեսակի հրթիռակոծմամբ: 13-ին կրկնուեցին դրանք, իսկ լոյս 17-ի գիշերը արկը պայթեց հանրակացարանի իրենց սենեակի պատուհանի վրայ: Մինչ այդ արթնացել էին արկերի պայթիւնից, եւ Գենիան երեխային վերցնելով վազեց ներքեւի յարկ: Մերուժը մնաց նոյն տեղում, կարծես սիրտը քար լինէր: Այդ պահին հեռաձայնեցին եւ պահանջեցին իրեն: Իր դուրս գալուց յետոյ արկը պայթեց ճիշտ այնտեղ, ուր քիչ առաջ կանգնած էր:

Զէնքերը ասիճանաբար կատարելագործուեցին եւ վիճակն աւելի ծանրացաւ: Յունուարի 10-ին դրոշները փակուեցին: Քաղաքի վրայ արդէն «Գրադ»ներն էին «աշխատում»: Ժողովուրդը սկսեց ապրել նկուղներում: Այդ օրերին էր, որ պիտի ծնուէր Մերուժենց երկրորդ երեխան: «Երեխան պիտի ծնուի այստեղ, իր հողում, թէկուզ պայթիւնների տակ»,- կարգադրել էր Մերուժանը: Միշտ ասում էր, որ ոչ մի երեխայ կամ կին պիտի չհեռանայ այն հողից, որտեղ ինքը ապրում է: Տղամարդիկ ուժ եւ խիզախութիւն են ստանում, երբ զգում են, որ իրենց թիկունքում ոչ միայն հայրենի հողն է, այլեւ ընտանիքներ են, ծերեր, երեխաներ, կանայք:

Սակայն մի անգամ, երբ ուժգին հրետակոծութիւնից յետոյ մտաւ նկուղ եւ տեսաւ ներսում մնացածների ահաւոր վիճակը, կանայք ստիպեցին, որ Գենիային տեղափոխի ապահով տեղ: Բոլորը խոստացան, որ իրենք մնալու են նոյն տեղում: Գենիային տեղափոխեցին Գորիս: Ծնուեց Հայկը (Մերուժանը նախորք էր անուանակոչել): Դա Լաչինի միջանցքի ազատագրման օրն էր: Միանգամից երկու ուրախալի լուր:

Չէր ուզում նրանց երկար ժամանակով թողնել Գորիսում եւ հեռախօսով հրահանգում էր պատրաստուել վերադառնալու Ստեփանակերտ: Թէեւ հրթիռահրետանային ռմբակոծումները շարունակում էին, վերադարձան Արցախ: Փոքրիկներին որոնցից հեռու պահելու համար տեղափոխուեցին Գիշի: Մի քանի ամիս մնացին այնտեղ: Մերուժանին շատ էին կարօտում, մանաւանդ Արմինէն առանց հայրիկի չէր կարողանում մնալ: Այս անգամ գնացին Մարտունի, ուր Մերուժանի գումարտակն էր: Սկսեցին այցելել գումարտակ եւ փոքրիկը եւս կապուեց հայրիկին: Մի անգամ էլ երբ գնացին, տեսան հայրը մարտից վերադարձել եւ յոգնած ննած է: Ես եկան, սակայն Արմինէն նորից գնաց հոր մօտ, եւ երեք ժամ սպասել էր մինչեւ հայրիկը կարթնանար: Երեխաներին անչափ էր սիրում եւ մտադրուել էր, որ պիտի 4 երեխայ ունենան: Զոհուելու նախօրերին Գենիան մի փոքր պատկերացում էր տուել երրորդ երեխայի գոյութեան մասին: Մերուժանը շատ էր ուրախացել, սակայն փոքրիկ Մերուժանին այդպէս էլ չտեսաւ. նա ծնուեց հոր զոհուելուց յետոյ եւ կարծես հոր շարունակութիւնը լինի:

Զոհուելու նախօրերին պատուէրներ էր տալիս, որ տղային պիտի կարաստի պարապմունքների տանեն, իր չլինելու պարագային ինչպէս պիտի իրենց պահեն: Մի խօսքով՝ կարծես կանխագուշակել էր, որ երկար չի մնալու: Գենիան չէր ուզում զգացնել տայ հոգու տագնապը, առանց այդ էլ կինը միշտ մտա-

Միհր Ղուլիաճեան

տանջութիւնների մէջ էր լինում մինչեւ ամուսնու վերադարձը, ուրի դողով էր սպասում:

Մերուժանը, իրօք, եղել է կատարեալ, թէ որպէս ռազմիկ-հրամանատար, թէ որպէս ընկեր, թէ որպէս զաւակ, ամուսին եւ ծնող: Ազնուահոգութիւնը շռայլօրէն դրսեւորում էր բոլորի նկատմամբ: Իր ճշմարիտ մտայանգումներով ձգտում էր վերջ տալ դժգոհութիւններ, ունայնութիւն ցանողներին: Նա միշտ կեանքն իմաստաւորող մի հիմք գտնում էր: Երբ վատ երեւոյթի էին առընչւում, հանգիստ լուսաբանում էր մօտաւորապէս այսպէս. «Պատերազմն այսպիսին է. միշտ ջրի երես է հանում մարդկային տարբեր որակներ: Կը լինեն հերոսներ եւ վախկոտներ, ազգի նուիրեալներ եւ թալանչիներ եւ միմեանց հակադիր էլի շատ բաներ: Պէտք չէ մարդկային ստոր որակների ազդեցութեան տակ ընկնել եւ նահանջել: Միշտ պիտի լաւ գործեր անել եւ վշտի առկայութիւնը եւս բնական համարել»:

Վերջին 20 օրերի ընթացքին Միհրը մնում էր իրենց տանը: Միասին էին կատարում իրենց ռազմական գործերը եւ միասին տուն դառնում: Օգոստոսի 22ին Մերուժենց ամուսնութեան 5-րդ տարեդարձն էր եւ Գենիան սպասում էր, թէ այդ օրը գոնէ մի փիչ շուտ տուն կը վերադառնան: Երեւի անհետաձգելի գործերը շատ էին, եւ միայն կէսգիշերին տուն դարձան: Շատ էին յոգնած, անձրեւից թրջուած եւ հիւանդ: «Գործեր շատ կային, չկարողացանք շուտ գալ: Վաղը մի թեթեւ կը նշենք»: Դրանք նրա վերջին խօսքերն էին, որ լսեց կինը: Վաղ առաւօտեան վեր կացան եւ մեկնեցին: Այդ օրը Գենիան տօնական ծաղիկների փոխարէն սգոյ ծաղիկներ էր ընդունում: Սուգ իջաւ հինգ ընտանիքների վրայ:

Այսպէս է աւարտւում «միլիոն գործի տէր» մարդու կենաց պատմութիւնը, որ պիտի շարունակեն իր զաւակները՝ Արմինէն, Հայկը, փոքրիկ Մերուժանը: Թող առողջ եւ բախտաւոր մեծանան եւ Աստուած իրենց պահապան:

Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ 1993 թուականի օգոստոսի 24-ին Մարտունի քաղաքում, ամենայն պատշաճութեամբ, ինչպէս վայել է հերոսին: Մարտունիի ամբողջ ժողովուրդն էր հրաժեշտ տալիս իր զաւակին, Հ.Յ.Դ. հարիւրաւոր մարտիկներ եւ կուսակցական ընկերներ կային Արցախի միւս շրջաններից, Ստեփանակերտից եւ Երեւանից: Ներկայ էին ԼՂՀ Գերագոյն խորհրդի Նախագահութեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամներ, ԼՂՀ Պաշտպանութեան բանակի ներկայացուցիչներ: Հրաժեշտի հանրահաւաքին ելոյթ ունեցան Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեանը, Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար Հմայեակ Հարոյեանը, զինուորական պարեշ Վարդան Աւետիսեանը, մանկավարժ Գրիգոր Ուլուբաբեանը, բանաստեղծ Էռնեստ Եսայեանը:

Մերուժանի մասին շատերն են արտայայտուել՝ գրաւոր թէ բանաւոր: Ահա մի քանիսը դրանցից: « Եւ ներկաները չէին հաւատում, թէ ազատագրական իր պայքարն այլեւս չի շարունակելու մի մարդ, ով իր ներկայութեամբ եւ կեցուածքով ժխտումն էր ստի եւ անարդարութեան: Ոչ մի անգամ, նոյնիսկ պատեհ առիթով, նա բարձրաձայն չպատմեց իր արածի մասին: Այդ մասին ասաց Մերուժանից առաջ լեգենդ դարձած Մոնթէն. *«Մերուժանն էլ Աւո է»* (Շուշանիկ Հայրապետեան (Դահրաւեցի), «Արցախ», 2 սեպտ., 1993):

Վարդան Աւետիսեան. «Մերուժանը դեռեւս պայքարի սկզբնական շրջանում իր ազնըլութեան, ընկերասիրութեան եւ խիզախութեան շնորհներով արժանացել էր ժողովրդի, մարտիկների եւ հրամանատարների սիրոյն եւ յարգանքին: Իսկ վերջին ժամանակներս, յատկապէս հրամանատարական եւ շտաբի հաւաքներին անպայման իր խօսքն էր ասում, որը փաստօրէն լինում էր վճռորոշ: Բոլորը հաշուի էին նստում Մերուժի հետ: Յիշում եմ, Աւոյի սպանութիւնից յետոյ, նոր հրամանատար նշանակելու պահին դարձեալ վճռական խօսք ասաց Մերուժանը եւ բոլորը պաշտպանեցին նրա առաջարկը: Շատ դէպքերում, անգամ գիշերը, Աւոն կամ Հարոյեանը կանչում էին Մերուժին եւ խորհրդակցում նրա հետ: Այսինքն՝ Մերուժանի ռազմագիտական փորձը եւ իմացութիւնը օգտագործում էր իբրեւ հաստատուն իրողութիւն եւ յաջողութեան հասնելու պայման:

Գումարակի պատմութեան մէջ չի եղել մէկ իսկ մարական գործողութիւն՝ առանց Մերուժանի մասնակցութեան: Մինչեւ կեանքի վերջին պահը նա պայքարի մէջ էր: Ի տարբերութիւն մի շարք հրամանատարների, մարտը վարում էր ոչ թէ հեռակայով, ինչ-որ դիտակէտից, այլ ընթանում էր առջեւից եւ իր հետեւից տանում գումարակը: Այդպէս եղել է Մուղանլու, Ամիրանլար, Կուրապատկինօ, Մարզուլու գիւղերի ազատագրման ժամանակ: Այդպէս եղել է նաեւ Աղդամի, Մարտակերտի, Քելբաջարի շրջանների մարտերում: Մերուժը միշտ առաջին գծում էր: Նրա խիզախութիւնն ու քաջութիւնը սահման չունէին: Երբ տանկերն այլեւս առաջ շարժուել չէին կարողանում, նա իր ՈՒԱԶով առաջ էր անցնում եւ ճանապարհ բացում: Դա էլ աղաւնիվում էր յաջողութիւնը: Եթէ նման քայլի չդիմէր հրամանատարը՝ նախաձեռնութիւնը կանցնէր թշնամուն: Ի դէմս նրա՝ մենք կորցրինք Արցախի ազատագրական պայքարի խոշորագոյն դէմքերից մէկին: Այն յատկանիշները, որ ժողովուրդը կապում էր Մոնթէ-Աւօ անունը, յատուկ էին նաեւ Մերուժին: Նրա մարական կեանքին ծանօթները Մերուժին իրաւամբ համեմատում էին Աւոյին: Աւոն ազնիւ էր, խիզախ էր. ձգտում էր միշտ լինել դիրքերում, ցանկանում էր առաջին հերթին բաւարարել դիրքերում գտնուողների պահանջները: Նոյն կերպ եւ վարում էր Մերուժը:

Ինչպէս նրան կարելի է ներկայացնել իբրեւ գումարակի հրամանատարի, այնպէս էլ իբրեւ դաշնակցական գործչի: Ցուցամոլ չէր եւ երբեք յայտնի չէր անում, որ Արցախի Կենտրոնական կոմիտէի անդամ է կամ թէկուզ՝ հրամանատար: Երբեմն ոմանք ակնարկում էին, որ եթէ մենք դաշնակցական չլինէինք՝ ամեն ինչ կունենայինք: Սակայն մենք այդ խօսքերից չէինք ընկճւում»:

Դաւիթ Իշխանեան.- *«Մերուժանի հետ ուսանողական ընկերներ էինք, ուսանողական միութեան անդամներ: Դեռ 90-91 թուականներից կազմակերպչի դեր էինք ստանձնել մեր բնակավայրերում՝ ջոկատների կազմակերպումը: Մերուժանը, Արմենն այն անհատներն էին, որոնք դժուար թէ ծնուէին կամ կազմաւորուէին խորհրդային այն տարիներին: Նրանք արդէն նման էին Սփիւռքի հայկական ընտանիքներում դաստիարակուած տղաներին: Նրանք մարդիկ էին, ում մէջ արթնացել էր ազգային գէնը, հանճարը եւ դա պիտի իր համապատասխան առարկայական դրսեւորումն ստանար: Պարզապէս հայրենիքի նուիրեալներ էին»:*

Մերուժան Արմէնի Մօսիեանը ծնուել է 1965 թուականին Մարտունի քաղաքում, բանուորի ընտանիքում: Միջնակարգ դպրոցն աւարտելուց յետոյ 1982-88 թթ. ուսանել է Ստեփանակերտի մանկավարժական համալսարանում, միջանկեալ երկու տարի՝ 1983-85 թթ. ծառայելով խորհրդային բանակում: Աւարտելուց յետոյ աշխատել է Մարտունու կոմերիտմիութեան շրջկոմի հրահանգիչ, ապա ստանձնել է Հ.Յ.Դ. մամլոյ եւ տեղեկատու կենտրոնի Մարտունու թղթակցի պաշտօնը եւ թղթակցել շրջանային «Ամարաս» պարբերականին: Ձեռնարկել է զէնքի հայթայթման եւ շրջանի պաշտպանութեան գործը, առաջնորդել է բնակավայրերի ազատագրման եւ թշնամու կրակակէտերը ոչնչացնելու մարտերը, ընտրուել շրջանի գումարակներից մէկի հրամանատար, անդամագրուել է Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը եւ ընտրուել Արցախի Կենտրոնական կոմիտէի անդամ: Մնացեալի մասին հակիրճ ասուած է: Մերուժանը զոհուել է իր ընկերների՝ Միհր Ջուլհաճեանի, Արտակ Մնացականեանի եւ Լեւոն Համբարձումեանի հետ սահմանապահ դիրքերը առաջ տանելիս, ականի պայթիւնից, երբ վերադառնում էին տուն:

Քիչ ասուած եւ դեռ չասուած բաներ Դանիէլ Վարուժանի մասին

Կարէն Խանլարեան

Այս տարի լրանում է հայ մեծանուն բանաստեղծ Դանիէլ Վարուժանի ծննդեան 127ամեակը:

Նախ մի պարզաբանում. Հայաստանում քչերը գիտեն, որ նա եղել է դաշնակցական գործիչ, իսկ Թուրքիայում, որոշ աղբիւրներ, նրան համարում են Հնչակեան կուսակցութեան անդամ[1]: Հաշուի առնելով Դանիէլ Վարուժան բանաստեղծի համազգային համբաւն ու համաշխարհային հռչակը, այս երեւոյթը

Դանիէլ Վարուժանը եւ Սրախին

պատահական շփոթի արդիւնք չէ:

Դանիէլ Վարուժանի մասին «Հայկական սովետական հանրագիտարան»-ի շուրջ մէկուկէս էջ[2] բացատրութեան մէջ չի նշուում բանաստեղծի դաշնակցական լինելու հանգամանքը: Յետագայում նոյն իներցիայով այդ հարցին չի անդրադարձել նաեւ «Հայկական Հարց» հանրագիտարանը՝ Վարուժանին յատկացնելով շուրջ մէկ էջ[3]: Կարծում եմ, որ նշուած աղբիւրների հեղինակները, հակադաշնակցական պայքարի ընդհանուր սկզբունքներից զատ, Դանիէլ Վարուժանի դաշնակցականութեան «արատ»-ը մի կերպ թաքցնելով, թերեւս ձգտել են նրա համար արժանի տեղ ու դիրք ապահովել խորհրդային Հայաստանի գրական-մշակութային կեանքում: Նման ձգտում նկատելի է նաեւ սփիւռքեան մի շարք հեղինակների մօտ, յատկապէս 1960-ականներից յետոյ: Անկախ Հայաստանի իրականութեան մէջ այդ փաստն անտեսելն, իհարկէ, ոչ մի բանով հիմնաւորելի չէ:

Հետեւաբար, Դանիէլ Վարուժանի ծնընդեան 125-ամեակի առիթով, նրա յիշատակը իրօք յարգելու եւ նրա կեանքն ու թողած անկրկնելի վաստակը առաւել ընկալելի դարձնելու համար հարկաւոր է իմանալ նաեւ նրա գաղափարական «թաքցուած» պատկանելութիւնը: Ամեն դէպքում Դանիէլ Վարուժանի դաշնակցական լինելու մասին յստակօրէն վկայում է Թէոդիկը իր «Յուշարձան Ապրիլ 11» աշխատութեան «Կենսագրական» բաժնում[4]:

ՀՅԴ Բիւրոյի կողմից 1950թ. հրատարակուած «Յուշապատում ՀՅ Դաշնակցութեան» հատորում կարդում ենք. «Վարուժանը ոչ միայն հայ մտաւորական էր, այլեւ անուանի դաշնակցական: Բորենի Թալէաթը չէր կարող հրաժարուել նրա արիւնը խմելու հաճոյքից էլ: Եւ իրեն գաղափարակից ու բախտակից միւս

Դանիէլ Վարուժանը ընտանիքի հետ, 1902 թ.

Դանիէլ Վարուժանը «Սուրաս-Ռաֆայէլեան» վարժարանում, 1905 թ.

բոլոր մտաւորականների հետ Վարուժանն էլ նահատակուեց: Ե՞րբ, ո՞ւր, ինչպէ՞ս - ո՞վ կարող է ասել»[5]:

Հրաչ Տասնապետեանը իր աշխատութիւններից մէկում գրում է. «Եղեռնի զոհ գնացին Յարութիւն Շահրիկեան, Է. Ակնունի, Գարեգին Խաժակ, Ռուբ. Զարդարեան, Դանիէլ Վարուժան... եւ դաշնակցական շատ մը ուրիշ ղեկավարներ, մտաւորականներ եւ մարտիկներ»[6]:

Հրաչիկ Սիմոնեանը եւս իր ընդարձակ ուսումնասիրութիւններում, բնութագրելով ՀՅԴ գործունէութիւնը անցեալ դարասկզբում, ամրագրում է. «Յիշատակենք դաշնակցական նոր սերնդի նշանաւոր ներկայացուցիչներից մի քանիսին. Արամ, Ռուբէն, Իշխան, Սարգիս Բարսեղեան, Զարդարեան, Սիամանթօ, Վարուժան...»[7]:

Տիգրան Փիրանեանը յատկանշական յուշ է պատմում Դանիէլ Վարուժանի մասին, նրա կնոջ հետ կապուած, «Նայիրի» ամսագրի 1951 թ. յունուարի համարում. «Անգամ մը,- գրում է նա,- երբ չափէն աւելի անհամբերութիւն եւ ջղագրգռութիւն ցոյց կու տար.

- Վարուժան,- ըսի,- կ'ուզե՞ս, որ փախցնել տանք Արաքսին գիշերանց իր հօր տունէն:

- Օ՜հ, ո՜չ,- պատասխանեց,- այդպիսի քայլ մը ստուեր մը պիտի բերէ կուսակցութեանս վրայ, որուն անդամներէն ոմանք գուցէ մեղադրանքի տակ մնան յաչս ժողովուրդին. Չեմ փափաքիր, երբեք, որ կուսակցութիւնս յենարան դարձնեմ իմ սրտի գործին»[8]:

Նուիրուած դաշնակցականի եղերական մահուան ստոյգ թուականը պարզ չէ. որոշ աղբիւրներ յիշատակում են 1915 թ. օգոստոս ամիսը: Վերջերս բացայայտուած մի փաստաթուղթ հիմք է տալիս ենթադրելու, որ Վարուժանը կենդանի է եղել մինչեւ 1915 թ. վերջերը: 2006 թ. Թուրքիայի բանակի գլխաւոր շտաբի գրասենեակը հրատարակեց հայութեանը առընչուող արխիւային փաստաթղթերի մի հաւաքածոյ, դոկտ. Ահմետ Տեմիկի խմբագրութեամբ: Հաւաքածոն կոչւում է «ARSIV BELGELERIYLE ERMENI FAALIYETLERI-1914-1918» (1914-18 թթ. Հայութեան գործունէութիւնը ըստ արխիւային փաստաթղթերի) եւ բաղկացած է ութ ընդարձակ հատորներից: Հաւաքածոյի մի խոշոր մաս վերաբերում է 1914-16 թթ. հնչակեան եւ դաշնակցական ձերբակալուած ղեկավարների եւ գործիչների հարցաքննութիւններին, որոնց օսմաներէն բնագրերը վերծանուել են լատինատառ օսմաներէնով, ապա թարգմանուել թուրքերէն եւ անգլերէն լեզուներով: Հնչա-

Նոր լուսանկարներ Բրգնիկի հին բնակարաններից (http://www.maggieblanck.com):

կեաններ Փարամազի եւ Համբարձում Պոյաճեանի (Մուրատ) կողքին, վեցերորդ հատորում կարդում ենք նաեւ դաշնակցական Շաւարշ Միսաքեանի ցուցմունքները: Շաւարշ Միսաքեանը (1884-1957) եղել է ՀՅԴ պաշտօնաթերթ «Ազատամարտի» խմբագրական կազմի անդամ, յետագայում՝ Փարիզում հրատարակուող «Յառաջի» խմբագրապետ: 1916 թ. Պոլսից հեռանալուց ձերբակալուել եւ մարտի 26-ին փոխադրուել է օսմանական անվտանգութեան քաղաքական բաժին (քըսմը սիասի)[9]: Շաւարշ Միսաքեանի յուշատետրը եւ նամակները առգրաւուել եւ յանձնուել են անվտանգութեան պատասխանատու Սիւրէյա Սարրի բէյին, որը բաւարար չափով տիրապետում էր հայերէնին: Շաւարշ Միսաքեանը բանտում ինքնասպանութեան փորձ է կատարել եւ հրաշքով փրկուել: Իթթիհատական իշխանութիւնների տապալումով, ազատ է արձակուել 1918 թ.:

Շաւարշ Միսաքեան

1916 թ. օգոստոսի 14-ի (նոր տոմարով՝ 27-ի) հարցաքննութեան ընթացքում[10] քննիչը Շաւարշ Միսաքեանին հարցրել է Դանիէլ Վարուժանի մասին. «Ո՞վ է Վարուժանը (թուրքերէնով գրուած է՝ Varojak, իսկ անգլերէնով՝ Varoyak), ի՞նչ է գրել դեկտեմբերի 1-ի (նոր տոմարով՝ 14-ի) նամակում»[11]: Շեշտենք նաեւ, որ հարցաքննութեան արաբատառ օսմաներէնի թղթում բացորոշ կերպով հէնց գրուած է՝ واروژان (այսինքն՝ Վար**ուժան** եւ ոչ թէ՝ Վար**ոյակ** կամ Վար**ոժակ**)[12]: Շաւարշ Միսաքեանը տրուած հարցին պատասխանել է հետեւեալը. «Նա մի հայ բանաստեղծ է: Նա աքսորուած է: Նամակում գրուած է, որ նա գտնւում է Անկարայում»[13]:

Այսպիսով, Շաւարշ Միսաքեանից առգրաւուած նամակը մեր տրամադրութեան տակ չէ: Սակայն դրա գոյութեան փաստը, թուականը (1915 թ. դեկտ. 14) եւ նամակում գրուածի մասին Միսաքեանի տուած ցուցմունքը մտածել են տալիս, որ Դանիէլ Վարուժանն իր ձերբակալութիւնից (ապրիլի 23-ի գիշերը՝ լոյս 24-ին) մինչեւ տարեվերջ դեռ կենդանի է եղել եւ հասանելիս իր վերջին օրերը անց է կացրել Անկարայում: «...Վարուժանն էլ նահատակուեց: Ե՞րբ, ո՞ւր, ինչպէ՞ս - ո՞վ կարող է ասել...»

Մի փոքր յաւելում եւս Դանիէլ Վարուժանի


Շաւարշ Միսաքեանի օգոստ. 27-ի հարցաքննութեան օսմաներէն բնագրի լուսանկարը

ծննդավայր գիւղի եւ պապենական տան մասին: Փաստ է, որ տակաւին 1950-ականներին Սեբաստիայում ապրել են հայեր եւ մեծ թուով նաեւ «թաքուն», «ծպտեալ» կամ «կրիպտո» հայեր: 3.000 «պաշտօնական» հայ բնակչութիւն ունեցող այս շրջանի գիւղերում դեռ 1952 թ. ապրել են հայ ընտանիքներ. Աչիսարում՝ 10 տուն, Բրաբերդում՝ 5, Խորասանում՝ 4, Տուղասարում՝ մէկ տուն[14]: Սեբաստացի Մուրադի գիւղում՝ Կովտունում, մնացած է եղել մէկ հայ ընտանիք, իսկ Դանիէլ Վարուժանի ծննդավայրում՝ Բրգնիկում, ընդամէնը մէկ հայ ջրաղացպան, որի օգնութեամբ էլ լիբանանահայ ուղեւորին յաջողուել է կէսգիշերին մի բուռ հող վերցնել Վարուժանի պապենական կիսաւեր տնից: «Մոլեռանդ թուրքեր են Բրգնիկի բնակիչները,- «թաքուն» հայ ջրաղացպանը ասել է լիբանանահայ ուղեւորին,- եւ Վարուժանի անունը լսել չեն ուզէր»[15]:

1. Attar A., ERMENİ ULUSALCILIĞININ SİYASAL OLUŞUMU, Ermeni Araştırmaları II. Büyük Kongresi, 29-30 Mayıs 2004, Ankara, p. 5 (http://politika.dumlupinar.edu.tr/attar/2.doc).
2. Հայկական սովեսական հանրագիտարան, 11-րդ հատոր, Երեւան, 1985, էջ 348-349:
3. Հայկական Հարց, հանրագիտարան, Երեւան, 1996, էջ 433-434:
4. Թէոդիկ, Յուշարձան Ապրիլ 11, Պոլիս, 1919, էջ 12:
5. Յուշամատեան ՀՅ Դաշնակցութեան, Բոստոն, 1950, էջ 437:
6. Տասնամեայ Հ., ՀՅ Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. Ժողով (1890-1924), Աթենք, 1988, էջ 114-115:
7. Սիմոնեան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, Երեւան, 2003, էջ 187:
8. «Բագին», Բեյրութ, 1985, Ապրիլ-Մայիս:
9. Միսաքեան Շ., Օրեր եւ ժամեր, Փարիզ, 1958, էջ X:
10. ARŞİV BELGELERİYLE ERMENİ FAALİYETLERİ-1914-1918, Ankara, 2006, CİLT VI, pp. 237-239.
11. Նոյն տեղում, էջ 238:
12. Նոյն տեղում, էջ 368:
13. Նոյն տեղում, էջ 238:
14. «Ալիք», Թեհրան, 1952, սեպտեմբերի 14-17:
15. Նոյն տեղում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԸ ՄԱՐԴՆ Է

Ֆելիքս ՄԵԼՈՅԱՆ

Ինչո՞ւ սկսեց բանաստեղծությամբ խոսել, ինքն ով էր և ուզածն ինչ էր: Բանաստեղծությունը տուտուցների՞ բերանի խոսք է՝ քրքրվան- ճռռամախոս մեկն էր ու իր բովանդակությամբ գելուգազանից, ծառուծաղկից ջոկվե՞լ էր ուզում, homo sapiens էր և բնության տիրակալի աթոռին իրե՞ն սազական տեսավ: Իսկ գուցե գարնանը կանաչնեի մեջ, աշնանն էլ խաշամի տակ թաքնված բանաստեղծական մի զուլալ ակունք կա, որի տեղը միայն Երկնավորը գիտի...

Ուրիշ մի վարկած էլ կա՝ էլի Երկնավորի ակտիվ մասնակցությամբ: Գյուղի այրերն ու կնանիք սար էին բարձրացել բանջարի՝ եկավ: Աղաչանք-պաղատանք արին. *«Մեռնեմ զորությանդ, մեզ մի կյանք էլ պարգևիր, ապրածից բան չհասկացանք»*: Անհողդողդ էր. *«Չէ՛, էլ հերիք է, վերջ, դուք ուզվոր եք»*: Իսկական աստված էր՝ ճշմարիտ, ճշմարիտ էր ասում: Մեջներից մեկը կար՝ Երկնավորի չոր մերժումից հետո հույսը վերևներից կտրեց, պոեզիայի բնագավառ հիմնեց և բանաստեղծությամբ մահադարձ եղավ: Այսինքն իր համար երկրորդ մի կյանք վաստակեց ու հիմա դրա մեջ հոժար ապրում է:

Թո'ղ որ, անհամոզիչ

վարկած չէ, միայն թե պարզություն չմտավ, վարանմունքը էլի մնաց՝ բանաստեղծությունը գոհությո՞ւն է մեկ անգամ տրրվածից, թե՞ ուզվորություն:

Արտեմ Հարությունյանը գրում է.

Այն պարին էր, երբ
թաղաման առ թաղաման
պարածվող
աղքատ քրեական
բանդաները
իրար էին ոչնչացնում
աջ ու ձախ...

(«Գրական թերթ», N 21, 2011 թ.)

Սուտ կլինի ասեմ, թե չեմ հասկանում՝ ինչու է մասնատել տողը: Պոեմի ժանրը մերձ է փոքր արձակին. չափական, բայց անպաճույճ պատմելու իրավասություն ունի: Միայն թե ինքը սրանով արդարացող շարքայինը չէ. էշ է ներկում, խաբում է՝ թե իբր երկաթի հանքանյութից ոսկի է կորզում, գետնամած բանալ շարադրանքից բանաստեղծական նորօրյա քերթվածի խորաթափանց խոսք է հունցում, թե տես՝ դադրած կախականջը հիմա այլևս կրակի կտոր Պեգասի է, հեծել երկինքներում ճախրում է ու ժամանակների միջով տեսնում, որ Ստալինի շինելի պոնձե կոճակները *«մահվան դինամոներ էին // ասկահար, մահագոչ, մաղջոր-դաժան»*: Լավ, վազ անցնեմ, չհարցնեմ՝ ինչ ասել է *ասկահար*, բայց չհետաքրքրվե՞մ էլ, թե ինչու էին այդ պոնձե կոճակները *մահվան դինամո* և ոչ թե, ասենք, *կյանքի կարուսել*, ինչո՞ւ չէին *մահափթիթ, արյանաբաղջ, թարախ-«պաղլեց»* և այլն: Կոճակը որ *ասկահար* չեղավ, պինչը քամի մտած խարդախի ծանծաղ շարադրանքի մե՞ջ էլ տեղ չունի:

Բաներ կան, որ չեն ասվում ոչ այն պատճառով, որ ճշմարիտ չեն, այլ որովհետև ինտելեկտուալ շանտաժի իրական վտանգ են պարունակում՝ *«Հեպամնաց ես, չես հասկանում»*: Եվ որպեսզի շառից-փորձանքից հեռու մնաս՝ *հասկանում* ես: Եթե բոլորը հասկանում են՝ ճա՞րդ ինչ, դու էլ պիտի *հասկանաս*... Բանդագուշանք է, զուլում է, ե՞րբ ենք ազատվելու այս ճոռթած բերան ազատությունից, որ քստմնելի է, պոզա է, սուտ է: Տես անկախ Հայաստանի գրական բարձրագույն մրցանակն ստացած բանաստեղծի հայերենն ու բանաստեղծական պատկերը. *«Շինել, // որի սապոգները տրորեցին ազգեր // և տեղը ցանեցին գազար ու սիպոր»*:

Գազար, սխտոր, բողկ, կաղամբ... Այսինքն՝ աճպարարություն ու արկածախնդրություն, իմա՝ անշուն գյուղ ու անփետ օտարական: Հին, շատ հին պատմություն է, այս էլ որերորդ անգամ հոլովվում-կրկնվում է: Երեկ՝ մեկ, այսօր՝ երկու: Գևորգ Աբովը գեներալի լամպասավոր տաբատով էր («Ի զե՛ն»), ո՞ւր են հիմա այդ զորահրամանատարն ու իր ընթերցողների բանակը, որո՞նք են նրա նվաճած տարածքները, որ պիտի միացներ Հայ գրականություն տերությանը: Սա՝ երեկ: Այսօր էլ մենք՝ հեռուստացույցի առաջ մունջ, հնազանդ, նվաղած, ինքն էլ՝ Զրահարս, Ձյունանուշիկ, Հազարան բլբուլ: Մերթ քիթը կծկում, հեռու-հեռավոր գրական երկինքներից գոմահոտ է

առնում, մերթ գուրգուրում-ընքոշխնում է աճպարարի իր պարզունակ հնարքը: Դու պիտի *սակահար* սպասես հարության հրաշքի. իբր չգիտես՝ իր պատկերով ու նմանությամբ խորհրդահայ պոեզիայի քաջանվաստ Ցական Շողե՞նցը պիտի հարություն առնի, թե՞ Նարեկա վանքի ճգնավորը...

Չի պարպվում, ժամանակը անցյալից չի դատարկվում, հին ջուրն է ու հին ջրաղացը: Եվ դարձյալ իրեն մեյդան բերողին, տեսցնողին, իրեն ծիրանազարդողին ասող չկա. *«Հեռուսպասլիքը բամբառակի կարի՞ք ուներ՝ դո՛ւ գնայիր»*: Ախր դու,- իհարկե՝ մենք էլ քեզ հետ,- պատասխանատու ես ոչ միայն այսօրվա գրականության պղտոր ընթացքի, այլև երեկվա կայացած գրական արժեքների պահպանության համար:

Եթե կողքիդ ապրող քո նախորդը քեզ չի հասկանում, ինչ երաշխիք՝ թե քեզնից հետո եկողը հասկանալու է: Ո՛չ մի: Իսկ որ չի հասկանալու, մի զորեղ փաստարկ, այնուամենայնիվ, կա. գրականության հերոսը մարդն է և այդ ինքնահավան-գովգովիկը ժամանակների միջով գալիս ու չի փոխվում, կամ համարյա չի փոխվում: Իր նախորդն էլ է ինքը, հաջորդն էլ: Մարդու ծննդաբանության դարվինյան էվոլյուցիան սուտ դուրս եկավ: Դարվինի կապիկները մարդ չեն դառնում: Քոնոնք էլ չեն դառնալու: Քո նորարարությունը մարդու գոյության պայմաններ չի ապահովում, քո գրի մեջ մարդ չկա:

Այն իրականությունը, որի զգացմունքային դաշտը ներկայացնում է Անահիտ Հայրապետյանի խաղացկուն ոճը («Գրեթերթ», N 2, 2011 թ.), Հայաստան երկիրն է և մենք՝ հայ քրիստոնյաներս: Չես ասի, թե հեղինակը սևի կամ վարդագույնի չարաշահմամբ խեղաթյուրել է մեր և մեր տան պատկերը: Եվ այդ տան ներսում թշվառականի իր դողէրոցքը հիվանդության ախտանշան չէ, կենսակերպ է: Մերն էլ իր հետ՝ դժվար գոյատևություն է, շան կյանք է: Ապրում և սպասում ենք չգիտենք ինչի՝ ժողովրդավարության գալո՞ւն, թե՞ գնալուն: Եվ *«վերածնունդ»* պատումի մեջ կորուսյալ հայրենիքի ցավն էլ աշկարա ընթերցվում է. Էրգրինը չէ՝ Հայաստանի անկախ հանրապետության: Կարիք չկա ազնվականի նիստուկաց կրող ձևանալ, ակադեմիական ուսումի մեջ կոճկվել և ասել՝ *«Չի կարելի»*: Կարելի է. այս շփոթ ժամանակն էլ է իրենը, նվաղող հայրենիքն էլ, այս նախշած մայրաքաղաքի տապի մեջ փողոցների հալչող ասֆալտն էլ:

Ա. Հայրապետյանը գրում է.

կարոտել եմ
էն որ գիշերները գնում
էինք խմելու
հեպո կենացներ
հեպո թռվռալեն սթրիփ
քլաբերով
ինչ օպարի տեղ դրած
հայ տղերքի աչքները
վրես չռած
աղջիկների կրծքերին էի
աչքս տնկում
դոլարը տրուսիկի մեջ
դնում
կարոտել եմ
ռուբեն քեզ կարոտել եմ

Թվում է խոպան, անխնամ տեքստ է, բայց չէ՝

խնամված է այնպես, որ թողնի անխնամի տպավորություն, որ փաստերի, զգացողությունների պըղտոր հոսքը կենդանի ապրումի պատրանք ստեղծի: Ավելի քան պատրանք՝ ստեղծում է, բայց հնարքի չարաշահման վտանգը ի սկզբանե է և այնքան իրական, որ ի սկզբանե է թվում նաև նպատակի և միջոցի փոխատեղումը: Մոլական խաղ է, բանաստեղծությունը, ուրեմն, այն բանին է հետամուտ այլևս, ինչ կգոյացնի հեղինակի առաջնորդությունը թոթափած պատումի ինքնօրեն ընթացքը: Ուրեմն և՝ միջոցի սոսկական կոչումը չէ ժամանակ, մարդ, հոգեվիճակ բացահայտելը: Բացահայտեց՝ լավ, չբացահայտեց՝ գլուխը քարը, այդ է: Ա. Հայրապետյանի դեպքում, օրինակ, հեղինակի ես-ը ներկայացնում է որպես թռի-վռի, անցավ, նույնիսկ լկտի մեկը: Մինչդեռ աներկբա է՝ սպիտակ թղթի առաջ երիտասարդ ստեղծագործողը թպրտում է անունադրված և անանուն գրգիռների մեջ, և դա ընթերցողին բաց նյարդերով ներկայանալու իր իրավունքն է և իր գրի այժմեականության նշանը:

Ա. Հայրապետյանի սերունդը, ասում է, համարյա կուրծքը դեմ է արել՝ կենսական նյութին առավել մերձենալու, կոպիտ իրականությունը գրական արծարծումի բերելու, և այդ խիզախումի առաջնեկը, իբր, ինքն է: Ինքնահաճ զեղում է, այնքան էլ այդպես չէ՝ իրենց առաջ էլ խիզախողներ եղել են: Հրանտ Մաթևոսյանը, օրինակ, սրբապատկերը նկարում է առանց լուսապսակի: Ոնց որ չանելու բան է, բայց անում է. Արայիկ տղան մորը ասես բարձում է ձիուն ու զննում բեռը՝ *«Եվ մայրն անկենդան ու ծանր էր... և տղան տեսավ, որ իր մայրը մոր սրունքի մեջ փոս է արել ու փոսը չի լցվում, իսկ ծնկածալի երակները մուգ կապույտ են: Տղան նորից նայեց... սրունքի փոսը դանդաղ լցվում էր»* («Սկիզբը»):

Գրականությունը,- ներառյալ, իհարկե, պոեզիան,- լեզվական գոյացություն է: Հայ պոեզիան՝ Թումանյանի, Տերյանի, Չարենցի պատվական բանաստեղծություններից յուրաքանչյուրը, որ, հասկանալի է, հայերենի ծնունդ է, ինքնին նաև բերդ-ամրոց է, ուր իրեն պաշտպանված է զգում մեր լեզուն: Բանաստեղծությունը լեզվի ապահով օթևան է: Եվ եթե իր ժամանակակիցները չեն ուզում ապրել հնաոճ ամրոցում, թող իր նորաոճ դըղյակը կառուցի, միայն թե իրեն դուրս չդնի լեզվական ռեժիմից: Իհարկե՝ նաև ժանրայինից, քանզի արձակում բառն ու պատկերը այլ տարողունակություն ունեն, պոեզիայում՝ բոլորովին այլ: Եվ այսօր մեր մեջ հազիվ թե գտնվի մեկը, որ գիտի, թե ով, երբ, ինչ լեզվով է գրել առանց կետադրական նշանների առաջին բանաստեղծությունը, ինչպես և չկա որևէ մեկը, որ համոզված չլինի, թե այդ առաջամարտիկի առաջին ընթերցողը կետադրության նշանների տեղը գտել, դրել է. մտքում տողերը ընդմիջել՝ շունչը պահել է, վերջացրել՝ շունչ է քաշել...

Ամեն անգամ, երբ խոսքը սրան է գալիս, հուսահատություն է նկարվում

սկսնակի դեմքին,- զզվեցրել, հոգնեցրել են,- հետո այդ հոգեմաշ զգացումը ոնց որ բթանում է,- հաշտվում է ծանր կորուստի՝ քեզ կորցնելու հետ,- հետո ի խորոց սրտի հառաչում է,- խղճում, ներում է քեզ,- ի վերջո նվաղած ձայնով ասում է. «Կարևորը դա չէ»: Ճիշտ է ասում՝ բանաստեղծությունը ուրիշ կարևոր հատկանիշներ ունի, բայց թե ինչու է սա անկարևոր՝ գլուխ չունի պատճառաբանելու: Միայն ասում է, որ իրեն դուր է գալիս անկետադիր ոտանավորի գրաֆիկական պատկերը և որ այդ դուրեկան կառույցը իր խոհ ու ապրումի միացյալ տողին ընձեռում է խայտալու հնարավորություն: Բայց սա ինչո՞ւ բացատրություն չէ որ, սա էլ է բացատրություն. կետադրությունը, ուրեմն, կաշկանդում է իր զգացմունքների աննախադեպ պոռթկումը, արգելափակոցի գերան է՝ փակում է լիովին ինքնադրսևորվելու ճանապարհը: Իր խոսքն էլ չի մանրում, որ զահլա չտանես քո Թումանյանով և ոչ էլ Չարենց վկայակոչես՝ *«Ի սկզբանե էր բանը, և բանն էր ճիգ ու ջանք, // Եվ ջանքին առընթեր էր - երգը»*: Ինքը դա չի ընդունում, ինքը ուզում է անջանք երգել. լցոնված կակուղ երշիկն էլ է չէ՞ միս, բայց անոսկոր է: Լավ, թո'ղ որ: Բայց այդ անշրջանակ տվայտանքը մի քիչ ցրփրռ չէ՞, այդ պարականոն տեքստը, այդ ամենաթողությունը դուռ չե՞ն բացում հեշտագրության, երկարաբանության, բանաստեղծության իսկ ներսում չպատճառաբանված ժեստ ու արարքի առաջ... Անահիտ Հայրապետյանի ես-ը, օրինակ, որ կարոտել է Ռուբենին, ինչո՞ւ է անձնանունը փոքրատառով գրում, մեծատառը կապո՞ւմ է ձեռուոտը...

Բայց հարցը Անահիտը չէ. ջահել է, ճամփի վրա է, գնում է իրեն գտնելու: Բոլոր ժամանակների ստեղծագործողների ճամփաները բերում են ներկա, եթե ստեղծագործողը ժամանակին չի կտրել պորտալարը կյանքի հետ, քայլերն իրեն չեն տարել գերեզմանոց, չի լռվել-մնացել դափնեպսակը շլնքից կախ մահարձանի առաջ:

Շինել՝
մենության մեջ մեռնող
մարդու պորտալար,
որ կրծեց պարալ ԿԳԲ-ի
սպան:

Չէ, ուրիշ բանի է Արտեմ Հարությունյանը, հղացման ծնունդ չէ «Գրական թերթի» երկու էջին փռված նրա «պոեմը». հո չի կարելի հազարաբերան ծամծմվածը մղձավանջի մեջ որոճալ և դա համարել գրական հղացում: Ինքը, հաստատ, master class է վարում՝ թե ինչպիսին պետք է լինի բանաստեղծական պատկերը և ինչպես է պետք «գողունի» քծնել ՀՀ գործող նախագահին... Եվ էլի ուրիշ կյանքային բաներ:

Ավետիք Իսահակյանը գրում է.

...Կանգնի'ր, քարավանս,
ինչի կրթվա,
Թե հայրենիքես ինչ մարդ
կրկանչե:

Քեզ երբե՞ք չի թվացել: Որ կթվա՝ վերադարձիր:

ԴՐՕՇԱԿ
100 տարի առաջ

№ 7—12 (218) XXI ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolutionnaire

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ՃԳՆԱԺԱՄ

Այժմ նա ընդհանուր է, համաշխարհային: Արևելեան, Արևմտեան, Հարաւային և բոլոր միւս այլազան խնդիրները խճողուում են, հիւսւում մի այլանդակ ու ոճրանիւթ քաօսի մէջ և թուում է թէ հեռու չէ այլևս... տիտանեան բախումների և ընդհանուր տակնուվրայութեան ժամը:

Վաղուց աշխարհը և մասնաւորապէս ասիական մերձաւոր արևելքը չեն ապրել այսպիսի տագնապի օրեր: Դեռ նոր քաղաքակիրթ մարդկութիւնը դող ու սարսուռով իմացաւ դիւանագիտական մահաշունչ դահլիճներէն դուրս կորզուած երկչոտ յայտարարութիւններից, որ ներկայ տարուայ ամառը համաշխարհային խաղաղութիւնը կախուած է եղել մի մազից, որ մօտ է եղել պայթելու պատերազմի ահռելի, համաճարակ կատաստրոֆը և երկու մեծագոյն տիտանները - Անգլիա և Գերմանիա - մինը ծովերի հրամանատար, միւսը ցամաքի՝ քիչ էր մնացել, որ Մարոկկեան աղէտաւոր կնճռի առթիւ, գրոհ տան իրարու դէմ և դարձնեն լուսաւոր Արևմուտքը մարդկային մի չտեսնուած սպանդանոց... Կնճիռը հարթուած է, բախումը՝ հեռացուած... աւա՜ղ, միայն ժամանակաւորապէս, ոչ ընդմիշտ: Կապիտալիստական տնտեսութեան և քաղաքակրթութեան մեքանիզմը իր չարանիւթ արգանդներէն պիտի ծնունդ տայ մշտապէս նորանոր կնճիռների, վէճերի ու բախումների. և այսպէս անվերջ թերևս պիտի շարունակուի «սպառազէն խաղաղութեան» ու պարբերական ցնցումների եղերերգը, առանց երբեք բաղձալի հաւասարակշիռը տեսնելու... մինչև որ նա ինքը, այդ կապիտալիստական տնտեսութիւնն ու իրաւակարգը, խեղդուի վերջնականապէս իր իսկ նիւթած ոճիրների մէջ, մինչև որ ծածանուի նրա հսկայ աւերակների վրայ միջազգային սոցիալիզ-

մի դրօշը: Մինչ այն՝ թւում է, թէ լոկ միայն թոյլ կիսադարմաններ են այն բոլոր խաղաղասիրական ցոյցերը, բողոքներն ու ցասումները, որ կատարւում են այլ և այլ երկրներում: Նրանք անհրաժեշտ են՝ իբրև յայտարար ճշմարիտ քաղաքակրթութեան և ռամկավարութեան ուժերի, նրանք օգտակար և արդիւնաւոր են, իբրև մշտական սպառնալիք, որը կարող է յաճախ կանխել զօրաւորների յախուռն ու վայրագ թռիչքները, թոյլ չտալ նրանց՝ նախնի դիւրութեամբ և թեթևամտութեամբ շղթայազերծել արիւնոտ նախճիրներ... Բայց նրանք առայժմ չունին վճռական նշանակութիւն... քանի դեռ զանգուածները բաւականաչափ չեն դաստիարակուած, չեն հասած իրենց շահերի պարզ գիտակցութեան, չեն ազատագրուած բռնաւորների և իշխող դասերի թունաւորիչ, ընդարմացուցիչ ազդեցութիւնից...

Պատերազմը որոտում է արդէն աֆրիկեան Տրիպոլիում և սպառնում տարածուել, ընդլայնել իր ալիքը մինչև Բոսֆոր և Փոքր-ասիական ջրերը: Անակնկա՞լ էր: Մինչ Երիտասարդ Թիւրքիան լաւ թէ վատ զբաղուած էր երկրի ներքին վերանորոգման հրապուրիչ աշխատանքով, վստահ միանգամայն խաղաղութեան յարատեւութեան և «բարեկամ» պետութիւնների աջակցութեան վրայ, մինչ ՀՅ Դաշնակցութիւնը խաղաղ սրտով գումարում էր իր հեղինակաւոր ատեանի նիստերը և ծեծում հայրենիքի այժմէական, չարատանջ խնդիրները - ժողովրդային ապահովութիւն, կրթական հարց, հողային հարց ևլն, մէկէն ի մէկ քաղաքական հորիզոնը մթագնեց, պատերազմը պայթեց, վերստին դնելով բոլորի առաջ հին նզովեալ անխուսափելի հարցումը՝ Թիւրքիոյ խաղաղ և յարատև պրօգրէսի հնարաւորութեան մասին...

Պայթեց շուտով և պարսկական տագնապը: Աւելի սուր և աւելի վտանգալի, քան երբևիցէ: Ով կարող էր գուշակել: Ով կարող էր սպասել այդքան յանդուգն պահանջներ ցարի կառավարութեան կողմից, պահանջներ, որոնք պարզապէս խախտում են Պարսկաստանի անկախութիւնը, դնում են այն ռուսական «հովանաւորութեան տակ»: Ով կարող էր մանաւանդ սպասել Անգլիայի կողմից այդքան «զիջող» վերաբերմունք դէպի Պետերբուրգի գրեթէ բոլոր յաւակնութիւններն ու պահանջները, որոնք միանգամայն դէմ են գնում անգլօ-ռուս համաձայնութեան ոգուն ու տառին՝ Պարսկաստանի status quo-ի նկատմամբ: Մէկ վերջնագրի պատասխանը հազիւ առած՝ Ռուսաստանը առաջադրեց Թեհրանի կառավարութեանը մի երկրորդ վերջնագիր, աւելի յանդուգն ու աւելի անիրաւ... Այն աստիճան անիրաւ՝ որ անգամ ցարիզմին մշտապէս խունկ ծխող օրգանները a la Temps ստիպուած են մեղմաձայն «հաւա՞ր» գոչել դաշնակից կառավարութեան անօրինակ ոտնձգութիւնների դէմ... Ռուսաստանը ոչ միայն պահանջում է հեռացնել ամերիկացի Մորգան Շուստերին պարսից ֆինանսական ծառայութիւնից, այլև թելադրում է պարսիկներին ապագայում ևս միանգամ ընդմիշտ հրաժարուել օտարներին իրենց պետական ծառայութեան մէջ հրաւիրելու... մի հանգամանք, որ ծայրայեղօրէն վիրաւորական է մի անկախ պետութեան համար և որ դարձնում է այդ պետութիւնը մի սոսկ խաղալիք իր բռնաւոր դրացու ճանկերում: Այդքանն էլ բաւական չէր. Ռուսաստանը պահանջում է- պարսից դատարկ, խղճալի պետական գանձարանից- նաև դրամական հատուցումն այն ծախքերի դիմաց, որ նա արել է իր զօրքերը Պարսկաստան տեղափոխելով:

Ժողովրդային բուռն ցոյցերի և սպառնական աղաղակների մէջ՝ Մէջլիսը տենդային ու փոթորկոտ վիճաբանութիւնից յետոյ, որոշեց ճնշող մեծամասնութեամբ՝ ետ մղել այդ երկրորդ վերջնագիրը:

Ինչ կը բերէ մօտիկ ապագան... Մինչ այս, մինչ այն, ռուսական զօրքերը կենտրոնանում են Պարսկաստանի որոշ կէտերում, գնում են դէպի Թեհրան, Թաւրիզ - և եւրոպական մամուլի խոշոր օրգաններ

հաւատացնում են, որ հասել է իրանեան պետութեան վախճանը, թէ նա պէտք է բաժանուի տխրահռչակ «համաձայնութիւնը» կնքող երկու պետութիւնների- Ռուսաստանի և Անգլիայի միջև:

Բանակցութիւնները, այնուամենայնիւ, դեռ շարունակւում են և ռուս կառավարութիւնը հաւաստիացնում է շարունակ, թէ Պարսկաստանի անկախութեան չը պիտի դիպչի, թէ ռուս զօրքերը գնում են միայն... ժամանակաւոր հանգամանքով:

Կացութիւնը չափազանց ծանր է: Եթէ անգամ այդ վերջին հաւաստիացումներն անկեղծ լինեն և Պարսկաստանի բաժանութեան խնդիր չը ծագի, դարձեալ այդ դժբախտ երկիրը պիտի շարունակէ թաւալուիլ արհաւրալի տագնապների մէջ. նա պիտի հարկադրուի ընդունել վերջնագրի այս կամ այն կէտը: Այս կամ այն ձևով հիւսիսային արջի ծանր թաթը այսուհետև զգալ է տալու իր չարաշուք ներկայութիւնը Իրանի ճակատագրի յեղյեղումների մէջ: Վայրագ, բռնակալ կառավարութիւնը, որ իր տան մէջ խեղդել է ամեն ազատութեան ձայն, պիտի ձգտէ վաղ թէ ուշ վերականգնել Պարսկաստանի մէջ իր ցանկալի իրաւակարգը, վերահաստատել Մահմեդ Ալիին իր կորսուած գահի վրայ... Իսկ դա անպայման կը նշանակէ՝ յարատև ու արիւնալի ճգնաժամ փոքրիկ վերածնուող երկրի համար... անվերջ, յուսահատ ճակատամարտեր յեղափոխականների ու յետադէմների միջև, լիակատար ուժասպառում, անիշխանութիւն և ի վերջոյ... գահավիժում, պատառոտում, բաժանում...

Այսպէս է նկարւում հեռապատկերը ռուսական նոր վերջնագրի հանդէպ: Առայժմ անակնկալի բռնուած Իրանը ողբում է, ըմբոստանում, անիծում է և բողոքում: Բողոքում է ռուսների, «գիավուրի» դէմ, բոյկոտի է ենթարկում նրա ապրանքը, կոտորում է ռուսասէր պարսից յետադէմներին, քարոզում է «սրբազան պատերազմ»: Մինչ Թեհրանը ծփում է արտասովոր ալեկոծութեան մէջ, Եփրեմը 3000 հոգի բախտիարների գլուխն անցած- այսպէս են հեռագրում եւրոպական մամուլին- սլանում է դէպի Ղազին՝ չափուելու ռուսների հետ, կանգնեցնելու նրանց արշաւը Թեհրանի վրայ:

Մեծ յուզմունք և Կ.Պոլսում: Թիւրքիոյ ճակատագիրն է: Պարսից տագնապը ուժգին թափով անդրադառնում է Երիտասարդ Թիւրքիայի վրայ և վերջինը ահ ու սարսափով է դիտում իր կրօնակից և դարաւոր հարևանի յօշոտման փորձերը, քաջալերուած Անգլիայի կողմից: Եթէ Անգլիան carte blanche է տուել «Մոսկովին» Իրանի մէջ, ինչ հիմք կայ մտածելու, որ նոյնպիսին չի տրուել և Թիւրքիայում... Ամպերը- ոչ պակաս խիտ ու չարագուշակ- կուտակուել են և թիւրքական հորիզոններում: Տրիպոլիսի պատերազմը ուսերի վրայ, իսկ անդին Կրէտէն ու Յունաստանը, Ռուսաստանից քաջալերուած, դաւում են շարունակ և սպառնում օր աւուր՝ նոր խզումն ու փոթորիկ. անհանգիստ է և Մակեդոնիան. չէտաները յանկարծ նորէն սաստկացրին գործունէութեան իրենց թափը, Բուլգարիան թէև անում է պարբերաբար խաղաղասէր ծանուցումներ, բայց նա ևս սպասում է բարեպատեհ վայրկեանին: Իսկ անդին՝ ամենամեծ ոսոխը - դարձեալ նոյն Ռուսաստանը - մէկէն ի մէկ ծառացաւ Երիտասարդ Թիւրքիոյ դէմ, եկաւ չոքեց կոկորդին և պահանջեց ազատ անցք տալ իր ռազմական նաւերին Դարդանելի նեղուցի մէջ- և միմիայն իր նաւերին:

Դա խախտումն է 40 տարուց ի վեր եղած դիւանագիտական հանդիսաւոր դաշնագրի. դա բացարձակ սպառնալիք է և Թիւրքիոյ անկախութեան դէմ: Դարձեալ... ով կարող էր գուշակել: Բայց անցքերը գահավիժում են շշմեցուցիչ արագութեամբ, միշտ յղի անակնկալներով: Հինգ հարիւր տարուայ իր անփառ գոյութեան ընթացքում՝ Պոլիսը գուցէ երբեք չի ապրել նման ճգնաժամ...

Արդի լիբանանեան բանաստեղծութիւն

Մայրիներուն ծիածանը

ՀԳՄ հրատարակչութիւն, Երևան- Պէյրութ, 2010, 300 էջ



Հենց սկզբից ասենք, որ խոսքը նորույթի մասին է: Առաջին անգամ Հայաստանում եւ Սփյուռքում թարգմանաբար հայ ընթերցողին է ներկայացվում միանգամից լիբանանցի յոթ արդի բանաստեղծների լավագույն ստեղծագործությունների հաստընտիր ժողովածուն:

Անցյալ դարի 50-ական թվականներին Լիբանանում ծայր առած գրական շարժումը, 1957-ին արդեն լույս ընծայեց «Շը ըr» (բանաստեղծություն) անվամբ իր եռամսյա հանդեսը, որն այնուհետև իր բերած գրական նոր շնչով կարողացավ հեղաշրջել ոչ միայն ժամանակի լիբանանյան, այլև ողջ արաբական ժամանակակից բանաստեղծության դիմագիծն ու էությունը:

Ինչո՞ւ հենց յոթ բանաստեղծ: Գրքի հեղինակ եւ թարգմանիչ Սարգիս Կիրակոսյանը «Առաջաբանի փոխարեն» բաժնում լիբանանյան արդի բանաստեղծության աշխարհում պայմանականորեն նշմարել է հինգ սերունդ, որոնց հայտնի, ոչ այնքան հայտնի եւ դեռևս մեկ-երկու նիհար ժողովածու լույս ընծայած ու առաջին գրական փորձերն անող ներկայացուցիչների ընդ-

հանուր թիվը հասում է հարյուրի սահմանը: Սակայն ընտրված յոթ բանաստեղծները, դարձյալ Սարգիս Կիրակոսյանի վկայությամբ, այն յոթ գրողներն են, որոնց ստեղծագործությունները հնարավորություն են տալիս ամբողջական պատկերացում կազմելու այն ամենի մասին, որ մեկ խոսքով կոչվում է արդի լիբանանյան բանաստեղծություն:

Գրքում ներառված բանաստեղծներից չորսը «Ը ը» գրական շարժման հիմնադիրներն են՝ Եուսէֆ Էլ-Խալը, Ասոնիսը, Շաուգի Ամի Շագրան, Ունսի Էլ-Հաժը: Մյուս երեքին՝ Փոլ Շաուլ, Ուասիի Սաաստ, Ադոնաս Պայտուն, «Մայրիներուն ծիածանը» հասընտիր ժողովածուի հեղինակը համարում է արդեն երկրորդ սերունդ, որ «Ը ը» գրական շարժմանը հարելով որպես նորահաս պատանիներ, արդեն մեկուկես տասնամյակ անց դարձան հիմնադիր սերնդի բերած բանաստեղծական խոսքի արժանավոր ժառանգորդներ:

Գրքի հետևյալ բաժիններում, որոնցում ներկայացված են լիբանանյան յոթ բանաստեղծները, տեղ են գտել նաև նրանց համառոտ կենսագրություններն ու ստեղծագործությունների ընդհանուր նկարագիրը տվող գրականագիտական վերլուծություններ: Սա անշուշտ պետք է համարել Սարգիս Կիրակոսյանի խրախուսելի ջանքը, որով նա հայ ընթերցողին առավել ընկալելի է դարձրել օտար բանաստեղծներին եւ նրանց շուրջն ընթացող գրական գործընթացները: Հատկանշական է նաև թարգմանությունների լեզվական բարձր որակը: Եթե մեկը չիմանա, որ արաբերենից թարգմանված բանաստեղծություն է կարդացածը, կմտածի, որ իրեն անծանոթ սփյուռքահայ բանաստեղծի գործ է ընթերցել: Այդ հնարավորությունն, անշուշտ, գրքի հեղինակին տվել է մեր ճոխ արևմտահայերենը, որին նա տիրապետում է ամենայն խորությամբ:

Ամփոփելով՝ նշենք նաև որ «Մայրիներուն ծիածանը» լույս է ընծայվել պետպատվերի շրջանակներում եւ Բուրջ Համուդի քաղաքապետարանի աջակցությամբ:

Էդիկ Անդրեասյան

Շաուգի Ամի Շագրա

Թող քարերը ծնրադրեն

Ճօճաթոռին մէջ
վարպետ շինարար
հայրս թող հանգչի,
թող քարերը ծնրադրեն
եւ կէսը դեղին
փետուրիս համար՝
որ սոխակը ստեղծեմ,
որ սոխակը խոնարհի:

Ունսի Էլ-Հաժ

Փակ դուռը

Ճեղքուած հագուստիդ ծալքերէն
կը մեկնին
ստուերներն արձակ
եւ աչքերուդ սպիտակութենէն կը բաժնուին
պաղեր
սահմանները վերստին կը բացուին
եւ կը կղզեն զայն

Ուասիի Սաաստ

Աղբիւրը

Երբ հարցուցին իր ոտքի տակին ջուրի մասին,
յոգնութեան քրտինքն է՝ ըսաւ,
ժամանակէ մը ի վեր ան ակ մը կը փնտռէր
եւ զայն կը գտնէր միայն
իր մարմնին մէջ:

Մկրտիչ Գիզգիզյան



Ծնվել է 1935թ. Ռոստովի մարզի Չալտր գյուղում:

1946-1951թթ. սովորել է Ռոստովի գեղանկարչական ուսումնարանի գեղարվեստի բաժնում:

1971թ. ավարտել է Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղարվեստի բաժինը:

1986-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է:

Նրա կտավներից շատերը ստեղծած են աշխարհով մեկ: Ցուցադրվել է ԱՄՆ-ում, Ռուսաստանում, մերձբալթյան երկրներում, Ֆրանսիայում և այլն:







ԴՐՈՇԱԿ

Պատկերասրահ













ԴՐՕՇԱԿ